№ 48 ԵՐԵՔՇԱԲԹԻ, 5 ՄԱՐՏԻ

1913
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ 5 ՄԱՐՏԻ № 48

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ" Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆօն № 2—58.

# ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.
Տպարանի տելեֆօն № 67.

ՊԱՊԻՐՈՍՆԵՐ ԳԱԼԼԻԱ „ԿՈՄԷՏԱ" ԸՆԿ.
— ԹԻՖԼԻՍՈՒՄ: —
25 հատը—15 կոպ., 10 հատը—6 կոպ. (Ե. ու.) 986. 0—20

ՍԱՐՈՒԽԱՆՈՎ-ԿՈՒՐԻՆՍԿԻ
ԱԿՑԻՕՆԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
սրանով յայտնում է, որ ներկայ 1913 թւի մարտի 20-ին, ցերեկվայ ժամը 1-ին ԲԱԳՎԻ քաղաքում, Ընկերութեան գրասենեակում (Մօլոկանեան փողոց, տուն № 4, Պլօտնիկովի) կը կատարվի ՄՐՑՈՒԹԻՒՆ
ՇՈՒՇԻ-ԵՒԼԱԽ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ
ՇԻՆՈՒԹԵԱՆ ՀՈՂԱՅԻՆ ԳՈՐԾԵՐԸ ԿԱՊԱԼՈՎ ՏԱԼՈՒ ՀԱՄԱՐ.
Մրցութեան մէջ մասնակցել ցանկացողները պարտաւոր են մինչև վերոյիշեալ ժամանակը գրաւոր յայտարարութիւն ներկայացնել վարչութեանս իրանց առաջարկութիւններով հանդերձ։ Ճանապարհի նախագիծը և տեխնիկական պայմանները գործերի նօմենկլատուրայի հետ (ուրուագիծ առանց արժէքները նշանակելու) կարելի է տեսնել ամեն օր՝ առ. ժ. 10—2-ը, բացի կիրակի և տօն օրերից։ Ամենաձեռնտու պայմաններ առաջարկողները պայմանաւորվելու դէպքում պարտաւոր են ներկայացնել առաջարկված գործի ընդհանուր գումարի 10 տոկոսը՝ իբրև գրաւական։
Շինութեան աշխատանքները կը սկսվեն այս տարվայ ապրիլին։
(Կ.) առ. 174. 2—1

ԲԵՐԼԻՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
Ներքին հիւանդութիւններ՝ առանձնապէս կրծքի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի։ Բժշկութիւն նաև ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, ՌԱԴԻՈ պրէպարատներով և վիրաբուժական միջոցով՝ ՊՆԵՎՄՕԹՕՐԱԿՍՈՎ։
Ընդունելութիւնը ամեն օր, առաւօտեան ժամը 9—1-ը և երեկոյեան ժամը 5—8-ը։
Չքաւորներին առ. ժամը 9—10-ը ձրիաբար։
Սօլօլակ, Բէհբութեան փող. № 23 (անկիւն Գանովսկայա)։ Հեռախօս 7—92.
(Ա. Օ.) առ. 92. 100—21

ԲԺԻՇԿ
Ե. Ի. ՄԻՆԱՍԵԱՆՑ
Ներքին, երեխայոց և ստամոքսա-աղիքային հիւանդութիւններ։
Պրօֆ. Mathieu-ի մասնագիտական կլինիկայից—Պարիզից
Ընդունելութիւնը (առաւ. ժ. 9—11-ը; (երեկ. ժ. 5—7-ը;
Միխայլօվսկի պր. 86, տէլէֆ. № 576.
(Ե.Հ.Կ.) առ. 179. 100—99

ԲԺԻՇԿ
ԾՈՒՇԱՆԻԿ ՆԱԲԱԹԵԱՆ
Ընդունում է հիւանդներ կանանց և մանկաբարձութեան վերաբերեալ ամեն օր, բացի կիրակի օրերից, երեկ. ժամը 5—6-ը։
Հասցէն՝ Ռուիշչէվսկայա № 1.
առ. (Կ. Ե. Հ.) 4. 100—25

ԲԺԻՇԿ
Յ. Մելիք-Նուբարեան
Ներքին և երեխաների հիւանդութիւններ, առանձնապէս թոքերի։
Թոքախտի բժշկութիւնը տուբերկուլիններով և պնեվմատօրակսով։
Ընդունելութիւնը ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ
Ամեն օր (առաւօտեան 12—1 ժ. (երեկոյեան 5—7 ժ.
Սօլօլակ, Ռուիշչեվսկայա 10 (Լերմօնտովսկ. դեղատան դիմացը)։
(Ե.Հ. Կ.) առ. 746. 100—63

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ս. Գ. ԿԷՕՆՃԵԱՆ
Ընդունում է ատամի և բերանի հիւանդութիւն ունեցողներին. պլօմբ, արհեստական ատամներ, ատամի հեռացում, (առանց ցաւի)։
Ընդունելութիւն 9—2-ը առաւ., 4—7-ը երեկ.
Անկիւն Արաս-Արաղսկայա հրապարակի և Լերմօնտովսկայա փողոցի, № 1.
(Ե.Հ.Կ.) առ. 849. 0—20

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Գ. Յ. ԳԱՐԱԿԻԼԵԱՆ
(Նախկին օգնական Կամայեվի)
Վերադառնալով արտասահմանից վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը
Ամեն օր՝ առաւօտեան ժ. 9—1½-ը և երեկ. ժ. 4—7-ը։
Վելեամինօվսկայա փողոց № 4, բն. 3.
առ. (Ա.Օ.Մ.) 129. 50—13

## ՓՈԽԱՐՔԱՅԻ ԱՌՈՂՋԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

—

Կովկասի փոխարքայի և կոմսուհի Ելիզավէտա Անդրէեվնայի անունով ամեն օր հեռագիրներ են ստացվում առողջութեան բարեմաղթութիւններով։ Այդ հեռագիրների թւումն են Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ V-ի, Փոթիի հայոց դպրոցի, Բագուի հայ հասարակութեան հեռագիրները և այլն։

—

Թիֆլիսի առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոս Թիֆլիս հասնելուն պէս, կիրակի, երեկոյեան, մաղթանք կատարեց Կովկասի փոխարքայ կոմս Ի. Ի. Վօրօնցօվ-Դաշկօվի առողջութեան համար։

—

Փոխարքայի ամուսինը Կ. Հ. Բ. Ընկ. խորհրդի նախագահի անունով ուղարկել է հետևեալ պատասխան-հեռագիրը. «Շնորհակալութիւն ձեզ և Ընկերութեան տան բոլոր հաւաքվածներին։ Խորապէս զգացված եմ ձեր աղօթքներով և բարեմաղթութիւններով։ Ամուսինս խնդրեց յայտնել բոլորին սրտագին շնորհակալութիւն»։

—

Սենատոր Նիկօլսկին Պետերբուրգից հեռագրում է Ելիզավէտա Անդրէեվնային. «Անկեղծ ուրախութեամբ տեղեկանալով կոմսի առողջութեան բարելաւման մասին, ամբողջ սրտից շնորհաւորում եմ Ձեզ և Ձեր ընտանիքին։ Մի մերժէք, եթէ հնարաւոր է, հաղորդել կոմսին իմ սրտագին ողջոյնը և վառ ցանկութիւնը շուտափոյթ առողջանալու։ Կոմսի հիւանդութեան յուզիչ տեղեկութիւնները համակրանք առաջ բերին դէպի նա և դէպի նրա պետական գործունէութիւնը հասարակութեան լայն խաւերում։ Այս օրերը ինձ ենթարկում էին հարց ու փորձի ամեն կողմից կոմսի առողջութեան մասին»։

—

Կիրակի, մարտի 3-ին, հանդիսաւոր պատարագից յետոյ, Թիֆլիսի հայ կաթօլիկների աղօթատան մէջ (Պետերբուրգսկայա փողոցում), գեր. առաքելական կառավարիչ Սարգիս վարդապետ Տէր-Աբրահամեան, հանդերձ քահանայական դասի և ներկայութեամբ բազմաթիւ ժողովրդի կատարեց մաղթանք Կովկասի փոխարքայ կոմս Վօրօնցօվ-Դաշկօվի առողջութեան համար։

—

Փոխարքայի առողջութեան համար մաղթանքներ կատարեցին Միքայէլեան հիւանդանոցը, րէալական և առևտրական դպրոցները, մէշչանների ընկերութիւնը, Քութայիսի վրաց ազնուականութիւնը, Թիֆլիսի հայոց ժողովարանը, վաճառականների ընկերութիւնը և այլն։

—

Թիֆլիսի մէշչանների ընկերութեան մէջ մաղթանք կատարվելուց յետոյ, աւագ Բ. Առաքելեան կոմսի անունով հեռագիր ուղարկելով՝ ստացել է շնորհակալական հեռագիր կոմսուհուց։

—

Թիֆլիսի ժողովարանում փոխարքայի առողջութեան համար մաղթանք կատարելուց յետոյ աւագների խորհուրդը ուղարկեց կոմսուհու անունով հեռագիր, որին կոմսուհին ուղարկեց շնորհակալական հեռագիր։

—

Թիֆլիսումն են արդէն փոխարքայի բոլոր զաւակները։

—

Կոմսուհի Ելիզավէտա Անդրէեվնան Բագուի Գեղամեան աւ. քահանայի անունով յղել է այսպիսի հեռագիր. «Իմ ամուսինը յանձնարարեց ինձ սրտանց շնորհակալ լինել ձեր և Բագուի հայ հոգևորականութեան ու հասարակութեան վշտակցութեան ու բարեմաղթութեան համար։ Մենք երկուսս էլ շատ զգացված ենք ուշադրութիւնից»։

—

Մարտի 3-ին Նորին Պայծառափայլութիւնը զգում էր իրան աւելի առոյգ։ Ախորժակը փոքր ինչ բացվեց։ Փոքր ինչ քնեց։ Զարկերակի և շնչառութեան մէջ փոփոխութիւն չեղաւ։

—

Լոյս մարտի 4-ի գիշերը Նորին Պայծառափայլութիւնը անցրեց անքուն։ Զարկերակը 66 էր մի րոպէում։ Շնչառութիւնը 28—մի րոպէում։ Ջերմութիւն չը կայ. զգաց յոգնածութիւն։ Ստորագրեցին բժիշկներ Ագամեան, Ռուդենկօ, Շէվչենկօ։

## ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

2 և 3 մարտի

Պետերբուրգ.— Այսօր խոստովանութիւնից յետոյ հաղորդվեցին Թագաւոր Կայսրը, Կայսրուհի Թագուհին, Մայր Կայսրուհին, Գահաժառանգ Արքայազնը և բոլոր Օգոստափառ Դուստրները։

—

Պետերբուրգ.—Ն. Կ. Բ. Մեծ Իշխանուհի Տատիանա Նիկօլայեվնայի առողջական դրութիւնը բարելաւում է։

—

Պետերբուրգ.—Իշխան Դոլգօրուկիի մարմնի թաղմանը ներկայ էին Թագաւոր Կայսրը և Մեծ Իշխանները։ Դագաղի վրա կենդանի ծաղիկներից պսակ էր դրված Թագաւոր Կայսրի և Կայսրուհի Թագուհի Ալէքսանդրա Ֆէօդօրովնայի կողմից և պսակներ Մայր Կայսրուհու և իտալական դեսպանի կողմից։

—

Բեռլին.— «Նորդ-Դոյտշէ-Ալգ.-Ցայտունգը» գրում է. «Բալկանեան դաշնակցութեան պահանջները բաւականին ընդգրկում են եւրոպական շահերի հետ կապված խնդիրները, ուստի և չեն կարող լուծումն ստանալ առանց Եւրոպայի մասնակցութեան։ Այդպէս են Սկիւտարի և Եգէյեան կղզիների ապագայի հարցերը, ինչպէս և պատերազմական վարձահատուցման խնդիրը։ Լրագիրը ցաւում է, որ Չերնօգօրիան այնքան մեծ թւով զոհեր տուեց Սկիւտարին տիրանալու համար, որոնք սակայն անօգուտ հանդիսացան, որովհետև Եւրոպան միաբերան ցանկանում է Սկիւտարին միացնել ապագայ Ալբանիային»։

—

Սօֆիա.—Ազգային ժողովում բուռն վիճաբանութիւններ առաջ բերեց Գէշօվի դեկլարացիան։ Օպպօզիցիան խստագոյն քննադատեց կառավարութեանը, դատապարտելով յոյների թշնամական վերաբերմունքը դէպի իրանց նուաճած երկիրների սերբերն ու բօլգարները և մատնանշելով ռումին-բօլգարական վէճում կառավարութեան ցոյց տուած զիջումների վրա։ Ֆինանսների մինիստր Թէօդօրօվը յայտնեց, թէ որովհետև պատերազմը աւարտված չէ և ծագած թիւրիմացութիւնները հարթված չեն, վաղաժամ է քննադատել կառավարութեան գործունէութիւնը, որի քաղաքականութիւնը ինքնին պէտք է դատվի իր հետևանքներով. մինիստրը յորդորում է օպպօզիցիային պաշտպանելու կառավարութեան, քանի Բօլգարիան երես առ երես կանգնած է թշնամու և հակառակորդների դիմաց։

—

Ֆրիդրիխսհաֆէն.— «Ցեպպելին 16» աէրօստատը թռիչք կատարեց ուժեղ քամու ժամանակ։ Աէրօստատի գօնդօլի վերին մասի վրա առաջին անգամ գտնվում էր գնդացիր, որ կրակեց 500 անգամ լի փամփուշտներից։ Փորձը ցոյց տուեց, որ միանգամայն կարելի է օգտվել գնդացիրից աէրօստատի վրա։

—

Լօնդօն.—«Թայմսը» խօսելով Բըղ. Թակցի այն տեղեկութեան մասին, թէ Պարսկաստանը աստիճանաբար դէպի իր անկմանն է դիմում, յայտնում է, թէ, հակառակ տիրող կարծիքի, ռուս զօրքերին յետ կանչելու հետևանք կը ստացվէր անիշխանութիւն։

1913—14 թ. թ. զինուորական բիւջէի ծախքերը հաշւել է 28.220.000 ֆունտ, անցեալ տարվանից 360,000 ֆունտից աւելի։ 243,000 ֆունտ յատկացված է օդագնացութեան համար։

—

Պարիզ.—Հավասը հաստատում է, որ զինուորական գերագոյն խորհուրդը միաձայն ընդունել է 3-ամեայ զինուորական ծառայութիւնը։

Պատգամաւորների պալատը ընդունեց բիւջէն։

—

Աթէնք.—Պատգամաւորների պալատում Վենիզէլօսը բողոքեց անպատասխանատու անձանց կարգադրութիւնների դէմ, որոնք յոյներին դրդում են դէպի Արևելեան Մակեդոնիա և Թրակիա, ուր նրանք կարող են դիմադրութեան հանդիպել, և նկատեց, որ նա դեռ սկիզբներում ասել է, որ Յունաստանը հրաժարվում է Թրակիայից միմիայն աշխարհագրական շարժառիթներից դրդված։ Դաշնակից տէրութիւնների փոխադարձ յարաբերութիւնների առիթով Վենիզէլօսը մատնանշեց, որ անէկսիայի հարցում պէտք է որ անխուսափելիօրէն դժուարութիւններ ծագէին, որովհետև ամեն մի ժողովրդի ազգային բնազդը դրդում է պահանջել որքան կարելի է մեծ բաժին այն համոզմամբ, թէ հէնց նա է աւելի միւսներից մասնակցել ընդհանուր կռւում։ Իրողութիւնը սակայն ցոյց է տալիս, որ բոլոր դաշնակիցները հաւասարապէս գործ դրին իրանց եռանդն ու ոյժը։

—

Պարիզ.—Պուանկարէն Էտիէնի ուղեկցութեամբ ներկայ եղաւ Վէնսէնում Պարիզի զօրաբանակի զօրահանդէսին։ Ամբոխը Վէնսէն գնալու ժամանակ պրէզիդենտի հասցէին ովսաննա արեց։

—

Վիէննա.— «Ցէյտը» տեղեկացաւ Բուդապեշտից, որ գօնվէդների գնդերը արձակում են 1909 թ. պահեստի զինուորներին։ 1910 թ. լրացուցիչ պահեստիները չեն արձակվում։ Լրագրի տեղեկութիւնների համաձայն, զօրախաղերը կը սկսվեն Պերեմըշլում՝ Գալիցիայում մարտի 14-ին արքիդուքս Ֆրիդրիխի հրամանատարութեամբ։

«Կոր. Բիւրօն» հերքում է լրագրական այն տեղեկութիւնը, թէ նաւատորմի Պօլա վերադառնալը կապ ունի պահեստիներին արձակելու հետ։ Նաւատորմը վերադառնում է Զատկի պատճառով, որովհետև նաւատորմը սովորաբար տօները անց է կացնում խոշոր նաւահանգիստներում։

—

Պարիզ.— Ժօնարը մինիստրների խորհրդի նիստում յայտնեց, որ «Լէօն Գամբէտտա» յածանաւը մեկնում է Դարդանել, որպէսզի հարկադրէ Թիւրքերին ազատ թողնել բռնված «Հէնրի Ֆրէյսինէ» նաւը։

—

Սօֆիա.—Գէշօվը և Դանէվը ընդունեցին Սիլիստրիայի, Բալչիկի, Կավարնի և Դօբրիչի 700 բնակիչների կողմից եկած պատգամաւորութեան, որ բողոքեց իրանց երկիրը Ռումինիային զիջելու դէմ։ Գէշօվը և Դանէվը յայտնեցին, որ կառավարութիւնը իրանից ամեն հնարաւոր բանը կանէ հայրենիքին սպառնացող անդամահատութեան առաջն առնելու համար. ազգը կարող է վստահանալ մեծ պետութիւնների արդարամտութեանը, որոնք չեն քանդի այն, ինչ որ 30 տարի առաջ ստեղծել են Ռուսաստանը և Եւրոպան։

Մարտի 5-ին Դանէվը մեկնում է Պետերբուրգ։

—

Ալէքսանդրիա.—Եկաւ «Համիդիէ» յածանաւը։

—

Պարիզ.—Պարիզի շրջակայքում կայացաւ նացիօնալիստների և սինդիկալիստների բողոքի միտինգ երեքամեայ զինուորական ծառայութիւն մտցնելու դէմ։

—

Հռոմ.—Պալատի նիստերը յետաձգվեցին ապրիլի 9-ին։

—

Տօկիօ.—Բիւջէն ստորին պալատում ընդունվեց հինգ ձայնի առաւելութեամբ։ Օպպօզիցիան պնդում էր պակասեցնելու ծախսերը 70 միլիօնով։ Մամուլը պաշտպանում է օպպօզիցիային։

—

Նիւ-Եօրկ.—Հիւսիսային-Ամերիկայի կենտրոնական և արևմտեան մասերում փոթորիկը խոշոր վնասներ պատճառեց. զոհվեցին 80 մարդ։

—

Բուէնօս-Այրէս.—Փոթորկի ժամանակ զոհվեցին մի քանի մարդ. շատերը վիրաւորվեցին։

—

Մօսկվա.—Սլաւօնական կոմիտէտը սերբիական միտրոպօլիտին 5000 ր. յանձնեց բալկանական դաշնակիցների կարիքների համար։

# ԲԱԼԿԱՆԵԱՆ ՏԱԳՆԱՊԸ

## ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

2 և 3 մարտի

Սալօնիկ.—Սերբիական մի մեծ զօրամաս նաւ նստեց՝ Սկիւտար դիմելու համար։

—

Աթէնք.—Պատգամաւորների պալատում արտաքին գործերի նախկին մինիստր Կալէրգիսը հարցապնդեց արտաքին քաղաքականութեան մասին, մատնանշելով թէ անհրաժեշտ է միացնել Եգէյեան կղզիները Յունաստանին, և ընդգծեց, որ Սերբիայի հետ բարեկամական յարաբերութիւններ պահպանելը հիմք է տալիս յուսալու, թէ բոլոր հերթական հարցերը կը կանոնաւորվեն։

«Խրօնօս» լրագրի խմբագիրը դատապարտվեց 8 օրով բանտարկութեան՝ բօլգարների դէմ ուղղված յօդուածի համար։

—

Լօնդօն.—Այսօր կայացաւ դեսպանների խորհրդակցութիւնը բալկանեան դաշնակիցների պատասխան նօտայի քննութեան համար։

Բալկանեան դաշնակիցների պատասխան նօտան այստեղ գործում է աննպաստ տպաւորութիւն։ Ռէյտերի ասելով՝ մի քանի շրջաններում դաշնակիցների պահանջները համարում են չափազանց։ Մեծ պետութիւնները խորհուրդ են տալու դաշնակիցներին չափաւորել այդ պահանջները, որպէսզի հնարաւոր լինի հաշտութիւն կնքել։

—

Սօֆիա.—Ազգային ժողովում Գէշօվը, առարկելով հարցապնդողներին, ասաց, որ ռումին-բօլգարական վէճի առիթով բանակցութիւնները վերջացած են, երկու կառավարութիւնները ընդունել են մեծ պետութիւնների միջնորդութիւնը։

Պատերազմական գործողութիւնների աւարտման առիթով մինիստրը ասաց. «Արդարութիւնը պահանջում է, որպէսզի մենք ստանանք աւելի, քան բաւական էր մեր բաւարարութեան համար առաջ։ Հաշտութեան պայմանները պէտք է համապատասխանեն զոհերին և կորուստներին՝ սկսած թշնամական գործողութիւնների վերսկսվելուց»։

—

Աթէնք.—Արտաքին գործերի մինիստրը մեծ պետութիւնների ներկայացուցիչներին յանձնեց միջնորդութեան առաջարկութեան դիմաց մշակած պատասխանը։

—

Ցետինիէ.—Մեծ պետութիւնների ներկայացուցիչները խնդրեցին կառավարութիւնից թոյլատրել Սկիւտարից դուրս գալ ոչ-կռւող ազգաբնակութեան։ Կառավարութիւնը՝ ռազմական ու քաղաքական շարժառիթներից դրդված՝ մերժեց բաւարարութիւն տալ յիշեալ խնդրին լիովին, այլ միայն համաձայնեց, որպէսզի քաղաքից ելնեն հիւպատոսները և իրանց պետութիւնների հպատակները։

—

Բէլգրադ.—«Համիդիէի» կողմից Սան-Ջիօվանի-դի-Մէդուայի, Ալեսիօյի և Ադրիատիկ ծովափի ռմբակոծութիւնը մամուլը վերագրում է Աւստրիայի գաղտնի դրդման։ Այստեղ պնդում են, որ, Չերնօգօրիայից ստացված տեղեկութիւնների համաձայն, «Համիդիէն» ունեցել է աւստրիական դրօշակ իր վրա և աւստրիական ռազմանաւերի հետ միասին մտել է Օտրանտի նեղուցը։

—

Սօֆիա.—Փետրվարի 27-ին Ակկալան գիւղում հետախոյզ զօրամասերի հետ ընդհարման ժամանակ թիւրքերը կորցրին 300 սպանված ու վիրաւոր։

Միևնոյն օրը բօլգարները փախուստի դարձրին մեծ կորուստներ պատճառելով թիւրքաց այն զօրախմբին, որ փորձեց յարձակման դիմել։

Թիւրքերը խմբերով փախչում են Ադրիանուպօլսից։ Ամէն օր 50—60 զինւոր ունտէր-օֆիցէրների առաջնորդութեամբ անձնատուր են լինում բօլգարներին։

Գալիպօլիի մօտ ամէն ինչ հանգիստ է։

—

Վիէննա.—Ցետինիէից հաղորդում են «Րէյխսպօստին», որ մարտի 1-ին սկսվել է Սկիւտարը կատաղի ռմբակոծվել բոլոր պաշարման թնդանօթներով։ Սկիւտարի բերդերի և հէնց քաղաքի մէջ հրդեհ է ծագել։

—

Աթէնք.—Սամոս կղզին երէկ գրաւվեց յոյն զօրքերից։

—

Կ. Պօլիս.—Թիւրքաց զօրքերի ընդհանուր հրամանատար Իզզէթ-փաշան հրաժարական տուեց, որ դեռ չէ ընդունվել։ Յաջորդ անուանում են Մահմուդ-փաշային, Տուրղութ-փաշային և Ահմէդ-փաշային։

Բ. Դրանը մօտ եղող շրջաններից տեղեկացնում են, որ Վիէննայում պաշտօնավարող Հիլմի-փաշան հեռագրով հաղորդել է կառավարութեանը, թէ անկարելի է ձեռք բերել աւստրիական գործարաններից զէնք ու ռազմամթերք։

Օսմանեան գործակալութիւնը յայտնում է, որ դաշնակիցների ներկայացրած հաշտութեան պայմանները օսմանեան պաշտօնական շրջաններից համարվում են անընդունելի։ Բ. Դուռը սպասում է այն առաջարկութիւններին, որ յանձնվելու են նրան մեծ պետութիւնների միջոցով չընդհատելով պատերազմական գործողութիւնները։

—

Աթէնք.—Դահաժառանգը հեռագրում է, որ Արէնիստի մօտերը յոյն զօրքերը գերեցին 30 օֆիցէրի և 1570 զինւորի։

# ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

## ԹԱՒՐԻԶԻ ՀԱՅԵՐԻ ԴԻՄՈՒՄԸ ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍՐԻՆ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆԸ

—

Թաւրիզ, 25 փետրվարի

Ինչպէս արդէն հաղորդել եմ, Ատրպատականի հայ ժողովուրդը հայոց հարցի առիթով ուղարկել էր մինիստրների խորհրդի նախագահի միջոցով հետևեալ հեռագիրը՝ Թագաւոր Կայսրի անունով.

«Պետերբուրգ, Նորին Մեծութիւն Ինքնակալին Ամենայն Ռուսաց.

«Ձերդ Մեծութիւն Ամենաողորմած Թագաւոր.

«Հակառակ Սան-Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ բարերար յօդուածին, կերպարանափոխված Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածով, հայերի դրութիւնը Թիւրքիայում վերջին 34 տարւայ ընթացքում, ոչ միայն չը բարուքվեց, այլ, ընդհակառակը, վատթարացաւ, որին ապացոյց ծառայել և ծառայում են հայերի սիստեմատիկ խմբական և մասնակի կոտորածները, նրանց բռնի իսլամացումը, հողերի և այլ գոյքերի յափշտակութիւնը և այլ զազանութիւններ խաղաղ հայ ազգաբնակութեան վրա սահմանադրական Թիւրքիայում, ի թիւս որոց պօգրօմները և ջարդերը Ադանայում և Թիւրքաց կայսրութեան այլ տեղերում։

«Թշուառ հայ-քրիստոնեաների այդ անելանելի դրութիւնը աւելի ևս կը վատթարանայ, երբ Բալկանների պետութիւնների քրիստոնեայ զօրքերի ձեռքով ջարդված թիւրք զօրքերը վերադառնան Փոքր-Ասիա։

«Այժմ, երբ ամբողջ աշխարհի հայերի հայեացքը ուղղված է Մեծն Ռուսիայի գթութեան վրա, որը դարերից ի վեր հանդիսացել է արևելեան քրիստոնեաների հովանաւորը և ազատարարը, մենք, Ատրպատականի նահանգի պարսկահայերս, համարձակվում ենք նոյնպէս արկանել Ձեր Կայսերական Մեծութեան գարշապարին մեր ամենախոնարհ խնդիրքը ընդունել Ձեր Բարձր հովանաւորութեան ներքոյ Թիւրքիայի մեր տանջվող եղբայր հայերին, հետևելով Ձեր Կայսերական Մեծութեան անմոռանալի նախնիքների օրինակներին, և դրանով վերջ դնել դարաւոր տանջանքներին բազմաչարչար հայ ժողովրդի, քրիստոնէական ընտանիքի հնագոյն անդամներից մէկի, պարգևելով նրան կեանքի, կրօնի, ընտանեկան պատուի և գոյքի ապահովութիւն։

«Ատրպատականի հայերի լիազօրութեամբ՝ առաջնորդական փոխանորդ Կարապետ քահ. Մանուկեան»։

Այս հեռագրին ստացվեց հետևեալ պատասխանը 1913 թ. փետրվարի 11-ին Թէհրանի ռուսաց կայսերական լիազօր դեսպան Պօկլեվսկիից, Թաւրիզի ռուսաց կայսերական ընդհանուր հիւպատոսի միջոցով.

«Հաճեցէք հաղորդել Ատրպատականի հայերի լիազօրին, ի պատասխանի նրա հեռագրին յանուն մինիստրների խորհրդի նախագահի, Կայսերական կառավարութեան յանձնարարութեամբ, հետևեալը.

«Ռուսաստանը բացառապէս բարեացակամօրէն է վերաբերվում հայ ժողովրդին և այժմ իր սրտին մօտ է ընդունում նրա շահերը և պատրաստ է ցոյց տալ նրան ամենահարուստ աջակցութիւն թողնելով իրան ընտրել ամենայարմար եղանակը՝ առաջ քշելու համար Թիւրքիայում ապրող հայերի ապահովութեան և կեանքի բարւոքման գործը»։

Հ.

## ՎՈՍՓՈՐԻ ԱՓԵՐԷՆ

—

**Պատրիարքարանի պաշտօնէութիւնը.—17 թիւ խաֆիյէն մոռցուած.—Յունաց պատրիարքին այցելութիւնը եւ միջազգային յանձնաժողով:**

Կ. Պօլիս, 22 փետրուար

Ազգ. Ժողովի վերջին երկու նիստերուն մէջ եկամտացոյցի քննութեան առթիւ բաւական ծանր ակնարկութիւն եղաւ պատրիարքարանի պաշտօնէութեան դէմ։ Այս յարձակումները առաջ բերին բաւական յուզում։

Պատրիարքարանի պաշտօնեաներէն մասնաւորապէս դրամական գործառնութեանց հսկող պաշտօնեան իր հրաժարականը մատոյց և բուռն կերպով բողոքեց։

Իսկ բոլոր պաշտօնեաները նոյնպէս սպառնացին գործադուլ ընել, սակայն ի վերջոյ միայն բողոքագրով մը բաւականացան։

Վարչութիւնը դեռ իրենց բողոքագիրը նկատի չառաւ և չենք գիտեր, թէ ասոր հետևանքը ինչ պիտի ըլլայ։

Սակայն պատրիարքարանի պաշտօնէութեան փութկոտութիւնը շատ զարմանալի է և գրեթէ ամենուն ալ ապշութիւն պատճառած է։ Կ. Պօլսոյ հայերուն մէջ առակի կարգ անցած է պատրիարքարանի պաշտօնէութեան ապիկարութիւնը, դանդաղութիւնը, անգործութիւնը, և այս պաշտօնէութիւնն է, որ կը շարժի, արժանապատուութեան խնդիր կը յարուցանէ և կը զայրանայ։

Ասիկա զարմանալի բան մըն է։ Իր հասցէին եղած լրագրական հրատարակութիւններ և անհամար ու անթիւ դիտողութիւններ երբեք չէին շարժած այս ճահիճը, և հիմա է, որ անիկա կը ծառանայ ազգային ժողովին դէմ, և երեսփոխաններ—որոնց անբռնաբարելի իրաւունքն է դիտողութիւններ ընելը—կը քննադատեն իրենց պաշտօնավարութիւնը։

Պատրիարքարանի պաշտօնէութեան վերակազմութեան որոշումը չորս տարի է սեղանի վրայ։ Եւ երբ վերակազմութեան վրայ կը խօսուի, ատիկա ինքնին նշան է, թէ պաշտօնէութիւնը արժանի չէ իր դիրքին։

Պաշտօնեաները այս չորս երկար տարիներու ընթացքին բնաւ խնդիր չըրին իրենց ապիկարութեան դարման տանելու այս ձեռնարկը, կերևայ թէ ամենքն ալ ապահով ըլլալով զանազան պաշտպաններու և բարեկամներու վրայ, և հիմա, երբ բուռն կերպով կը հարուածուի ազգ. ժողովը, յուսահատ ճիգ կընեն և կը պոռթկան։

Այս բողոքի արտայայտութեան նպաստած է նաև վարչութեան սա յայտարարութիւնը, թէ վարչութիւնը մինչև ապրիլ պիտի բերէ անպատճառ բիւջէն և վերակազմութեան ծրագիրը։

Պաշտօնեաները, որոնք այս վերջին ծրագրին յաւիտենապէս չկազմուելուն համոզուած էին, ինքզինքնին շատ մօտ գտնելով իրականութեան՝ ցնցուեցան և ասոր համար է որ հիմա կաշխատին զայն անգործադրելի ձգել։ Բոլոր հոգեբանութիւնը յարուցուած աղմուկին՝ հոս է։

⁂

Ամիսը անցաւ, և վարչութիւնը չկրցաւ ոևէ տեղեկութիւն մը բերել թիւ 17 խաֆիյէին մասին։ Վարչութիւնը միայն 7 օր պայմանաժամ կուզէր, և այսօր բազմաթիւ եօթնեակներ բոլորուած են, և սակայն նոյն իսկ բացատրութիւն տալու կը վարանի և կանճրկի։

Հաւանօրէն վարչութեան այս վարանումը ունի իր պատճառները։

Ոմանք կըսեն, թէ վարչութիւնը այս խնդիրը չուզեր լուսաբանել, որովհետև իր անդամներէն ոմանց մասին քննադատելի դէպքերու յիշատակութիւն պիտի ըլլայ։

Մասնաւորապէս շատ կը մեղադրուին մէկ երկու անձեր, որոնք՝ գիտնալով հանդերձ լրտեսի մը գոյութիւնը՝ իրողութիւնը գաղտնի պահած են իրենց ընկերներէն, երբ անիկա նոյն իսկ արձագանգ գտած էր մամուլին մէջ։

Վարչութեան անգիտակ անդամները, կազմելով մեծամասնութիւն, այն ատեն այս տեսակ ծանրակշիռ ամբաստանութիւն մը հերքել փութացին և ասով գէշ դիրքի մը մատնեցին բովանդակ վարչութիւնը։

Ուրիշներ ալ կըսեն, թէ վարչութիւնը գտած է լրտեսը, սակայն դրական փաստեր գոյութիւն չունենալուն համար՝ անկարող է հրապարակել, ուստի լուռ մնալը կը նախընտրէ։

Քաղաքացիական անվեհերութեան ապացոյց մըն ալ այս է անշուշտ։

⁂

Յունաց տիեզերական նորընտիր պատրիարք Գերմանոս սրբազան այցելեց Արշարունի պատրիարքը։ Յունաց պատրիարքն ալ փոխադարձաբար այցելեց մեր պատրիարքին։ Երկու այցելութեանց միջոցին ալ ուրախութեամբ դիտուեցաւ, որ Գերմանոս պատրիարք, հակառակ այլամերժ տրամադրութիւններով եկեղեցականի մը համբաւը ունենալուն, դէմ չէ համերաշխ գործունէութեան մը, և Արշարունի սրբազանի կողմէ յայտնուած փափագին վրայ՝ հաւանեցաւ վերստին նիւթի կոչելու իր նախորդին օրով կազմուած միջազգային յանձնաժողովը, որուն օգտակարութիւնը անուրանալի է։

Մասնաւորապէս Իթթիհատին վերստին պաշտօնի կոչուելուն հետ, դարձեալ օրակարգի խնդիր կը դառնայ քրիստոնեայ ազգերու առանձնաշնորհմաց խնդիրը, որոնց դէմ այնքան լարուած են այս կուսակցութեան անդամները։

Յունաց պատրիարքը այս պարագան կանխատեսելով է որ անշուշտ ինքն ալ համամիտ գտնուած է միջազգային յանձնաժողովին կազմութեան։

Վերջին օրերս դարձեալ կառավարութիւնը սկսաւ հայ վարժարաններու շուրջը խնդիր յարուցանել և մերժել զանոնք ճանչնալ, երբ արտօնագիր չունին։

Հայ և յոյն վարժարաններու մեծագոյն մասը բացուած ըլլալով շատ աւելի առաջ, քան թիւրք առաջին վարժարանին բացումը և կրթական մինիստրութեան հիմնարկութիւնը, դարաւոր կեանք մը ունին և աւանդաբար շարունակուած և ճանչցուած են կառավարութենէն, առանց սակայն արտօնագիր ունենալու։

Այսօր այդ պարագան կուզէ շահագործել կառավարութիւնը մերժելով դպրոցներու մէջ պաշտօնավարող ուսուցիչներու զինուորագրութենէ զերծ մնալու իրաւունքը։ Վաղը թերևս մերժէ նոյնիսկ անոնց գոյութիւնը ճանչնալ և բռնի փակէ։ Այն ատեն ընդհանուր աղէտ մը կը սպառնայ ազգային բազմաթիւ վարժարաններու։

Հետևաբար հարկ է պայքարիլ ապագային դժուարութեանց չհանդիպելու համար։

Նոյնիսկ այս օրերս հրատարակուեցաւ կալուածական օրէնքին վրայ քանի մը յաւելուած, որով ասկէ յետոյ Թիւրքիոյ մէջ հաւաքական մարմիններ, ինչպէս հասարակութիւններ, ընկերութիւններ, և այլն, պիտի կարող ըլլան կալուածատէր դառնալ, մինչ ասկէ առաջ իսլամական օրէնքի հակառակ կը նկատուէր հաւաքական մարմիններու սեփականատիրութիւնը, և ասոր համար կը դիմէին վտանգաւոր միջոցներու, անգոյ անձերու անունին արձանագրել տալով կալուածները։

Կառավարութիւնը պարբերաբար այդ կալուածները կը գրաւէր պահանջելով սեփականատէրերը, որոնք չէին կրնար ներկայանալ։

Հիմա նոր օրէնքին տրամադրութիւններէն իբր թէ կարելի պիտի ըլլայ օգտուիլ, սակայն անիկա ալ ունի իր անպատեհութիւնները, որոնց վրայ հաւաքաբար խորհրդակցիլ բոլոր պատրիարքարաններու համար կարևոր կը դառնայ։

Շաւալ

## ԴԻՄԱԿԱՀԱՆԴԷՍ ԼԻԼԱՒԱ ԹԱՂԻ ԴՊՐՈՑԻ ԹԱՏԵՐԱՍՐԱՀՈՒՄ

—

Թաւրիզ, 18 փետրվարի

Շատ անգամներ է գրվել ու յայտարարվել, որ Թաւրիզի երկթաղի ծխական ուսումնարանների հոգաբարձական մարմիններն ու ուսուցչական խմբերը՝ նիւթական միջոցների պակասութիւնից՝ հարկադրվել են յաճախ ներկայացումներ, երեկոյթներ և այլն կազմակերպել ուսուցիչ-ուսուցչուհիների մասնակցութեամբ, նախ՝ իբրև հասոյթի աղբիւր, երկրորդ՝ իբրև հասարակութեան բարքերը կրթող և նրա գեղարուեստական ճաշակը զարգացնող մի միջոց, ընդունելով հանդերձ ներկայացումներից հասած վնասը թէ ուսումնարաններին և թէ հասարակութեան հաւասարապէս։ Այս վերջին ամիսներում՝ օգուտ քաղել ուզելով ռուս ընտանիքների բազմանալուց ու նրանց ներկայութիւնից, թատրոնական գործի ղեկավար հոգաբարձուները աւելի գերադասեցին պարահանդէսները, ուր մուտ գործեցին ռուս և եւրոպացի տարրերը պարելու տենչով, որոնցից ստացվում է արդարև նիւթական շահ։ Պարահանդէսների կազմակերպութեան գործում Լիլաւայի հոգաբարձուները հանդէս եկան առաւել եռանդուն։

Պարահանդէսին աւելի փայլ ու հետաքրքրութիւն տալու ցանկութեամբ՝ Լիլաւայի հոգաբարձութիւնը որոշում է այս անգամ կազմել դիմակահանդէս միջազգային գոյնով, անխտիր ու անկօնտրոլ ներս ընդունելով ամեն եկողին։ Իրօք որ երևացին տպագրված յայտարարութիւններ հայերէն և ռուսերէն, և ամսիս 16-ին, շաբաթ երեկոյեան, տեղի ունեցաւ դիմակահանդէսը Լիլաւայի Հայկազեան և Թամարեան ուսումնարանի թատերասրահում՝ ճոխ պատրաստութեամբ՝ կօնֆէտի, վիճակախաղ, բուֆէտ և այլն։ Նուագում էր ռուսաց զինւորական նուագախումբը։

Տոմսակները ծախվել էին. զուարճացողների թիւը շատ էր և այլատարազ դիմակաւորների մրցումը հետաքրքրական ու գրաւիչ։ Մի քանի աջող տարազաւորներ ստացան հաւանութեան անվերջ ծափահարութիւն և ոսկէ ու արծաթէ մեդալներ։ Թատրոնում կային հայ երիտասարդներ, կանայք, օրիորդներ և Կենտրոնական ուսումնարանի աշակերտ-աշակերտուհիներից բաւական թւով։ Պատիւ էին արել ներս գալու ոչ միայն 8—10 ինտելիգենտ (!) պարսիկ երիտասարդներ՝ մէկը դիմակ հագած մօլլա, այլ և մի յայտնի ֆրանսիացու Թաւրիզում բացած համբաւաւոր կաֆէշանտանի վաստակաւոր 3 «աղջկերք» դիմակաւոր։

Պարերը մեծ եռ ու զեռով շարունակվ էին. մանաւանդ ծանօթ 3 դիմակա «աղջկերքը» բարձրաքրքիջ ծիծաղնե ոտամբարձ ոստիւններով աշխուժ պարահանդէսի վայրը՝ վայելք պատճառե մեր մի քանի զուարճասէրներին, մ կողմից պատուազգաց հայ ընտանիքնե ու մարդիկ բուռն զայրոյթ և տրտունջ էի արտայայտում ի տես ուսումնարանի ն րական յարկի տակ կատարված խայտառ արարքների։ Մինչև անգամ նոյն ուսում րանի ուսուցչուհի աւկինը դիմեց հո բարձուներից մինին՝ ի կարգ հրաւի «աղջկերանց», որ անպատկառ ճիչեր չա կեն և թոյլ չը տան ցոփաշունչ արտայ տութիւնների. սակայն ինչով կարելի դիմադրել ոգելից ըմպելիքի ազդեցութ ներքոյ անկեղծ բօշեների զուարճանք

Գիշերվայ ժամը 12-ից յետոյ դիմակ մի կողմ շպրտվեցին. անծանօթներն և մացան ու ճանաչեցին ներկաներին։ Ս երեւոյթից զարշանք զգացին կանուխ և ռացան թատրոնից։

Մի քիչ թողնենք պարողներին իր զուարթ կայտառումների մէջ և տեսնենք ինչ է կատարվում ինտելիգենտ պա ների շրջանում։

Աղմուկ, վէճ՝ կռիւ ծագելու սպառ պարսիկը ատրճանակ ցոյց տուած լի շշուկներ։ Ոմանց ասելով, կոնծած պա ինտելիգենտներից մէկը, ազատ զգալով բան բնականաբար, վիրաւորական բ թոյլ տուել դէպի մի ինչ-որ հայ պատ ուրիշների ասելով իր ընկերոջ հետ պա պարսիկը անզգուշութեամբ կոխել է ըն րոջ ոտը, որից առաջ է եկել անախ սկանդալ. այսպէս թէ այնպէս, հայ երի սարդները շտապում են պարսիկների ուզում են թակել. խուզարկում են ուս ճանակ չեն գտնում։ Վերջապէս հայերը ջելով ինտելիգենտ թուրքերի աղաչանք այլևս դուրս չեն վռնդում, և՝ մի քիչ հաշտ ուրախանալուց յետոյ, մինչև գի վայ ժամը 2-ը, գնում են տները։ Պ հանդէսը վերջանում է. հանդիսականներ մեծ մասը տանում է իր հետ զզ տպաւորութիւն։

Ինձ հաւաստիացրին, որ դիմակահան սկզբից դպրոցի տեսուչ Կ. Պետեան ա ջարկել է հոգաբարձութեան, որ կոմ տակ ընդունեն անծանօթ դիմակաւորի և առանձին ծանօթանալուց յետոյ՝ մի նրանց, որոնց մուտքը ներելի չէր. հոգաբարձուները չեն ընդունել տեսչ առաջարկը, առարկելով թէ դիմակահա սում բոլորի մուտքը ազատ պէտք է լ

Նպատակը արդարացնում է միջոց զուիտական սկզբունքով դպրոցի գոյութ նը պահպանելու աշխատող հոգաբարձու թիւնը ինչով է բացատրում եպերելի եր ւոյթը։ Հարցնում ենք. մի՞թէ մնացին մա կավարժութիւն, կրթարան, դաստիար կութիւն, որոնց աչալուրջ պաշտպան պէտք է լինի հոգաբարձութիւնը՝ նիւթ կանը հոգալուց առաջ։

Փափագելի էր, որ հայ մամուլը, կավարժ ուսուցիչները ձայն բարձրաց գործունէութեան մի էական սահման տային բարոյական խժդժութիւնների մար. այլապէս բարքերի անկումը և ա սերումը Պարսկաստանի պէս խուլ անկ ներում անխուսափելի են դժբաղդաբար

Հայկազ

# ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ԹԻՖԼԻՍԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԻ ԳԱԼՈՒՍՏԸ

—

Կիրակի, փետրվարի 3-ին Թիֆլիս հասաւ նոր առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոս Տէր-Մովսէսեանը։

Երևանի գնացքի գալուց առաջ երկաթուղային արքայական սենեակում ժողովվել էր հոծ բազմութիւն, որի մէջ էին քաղաքի հայ եկեղեցա-ծխական դպրոցների հոգաբարձութիւնները մանկավարժական կազմերի հետ, Ներսիսեան, Յովնանեան ու Գայեանեան օրիորդաց դպրոցների վարչութիւնները, ազգային կուլտուրական-բարեգործական ընկերութիւնների ինչպէս և հայ հոգևորականութեան ներկայացուցիչները։

Ուղիղ ժամը 5 ու 28 ր. գնացքը կանգ առաւ պլատֆորմի առաջ, և սրբազանի վագոնը մտան անդրկովկասեան երկաթուղիների կառավարիչ գեներալ Ֆօն-դեր-Բօօզ և Թիֆլիսի քաղաքային վարչութեան անդամ Մ. Աթաբէգեան, որոնց ողջոյնին Մեսրոպ եպիսկոպոսը շնորհակալութիւն յայտնեց։ Ապա սրբազանը դուրս ելաւ վագոնից և մտաւ արքայական սենեակը։ Այստեղ առաջնորդ սրբազանին բարի գալուստ յայտնվեց Ներսիսեան, Յովնանեան, եկեղեցական-ծխական դպրոցների, Կ. Հ. Բ. ու Որբախնամ Ընկերութիւնների կողմից։

Սրբազանը, յայտնելով իր ջերմ երախտիքը բոլոր ներկայացուցիչներին, յարակցեց, որ «ինձ միշտ կունենաք ձեզ հետ, իմ աշխատանքներն ու իմ ձգտումները կը լինեն ձեզ հետ»։

Ապա սրբազանը դուրս գալով նստեց տեղական հայ հարուստներից մինի աւտօմօբիլը, դիմեց առաջնորդարան։ Ներկայ եղողները ևս շտապեցին կառքերով։

Առաջնորդարանի մօտ, Վանքի աւագ եկեղեցու դարպասների առաջ կանգնած հայ հոգևորականութիւնը զգեստաւորվ ամպհովանու շուրջ, որի չորս կողմ կանգնած էր խուռն հասարակութիւն, շարունակութիւնը եկեղեցու ընդար բակումն էր։

Տեղ հասնելով՝ սրբազանը մտաւ ամ վանու տակ և աւուր պատշաճի արարո թեամբ՝ հանդէսով, խաչով օրհնելով ժո վրդին մտաւ եկեղեցի։ Ժողովուրդն գին հոսանքով գրոհ տուեց առաջ, և, ի հ կէ, կարգապահութիւնը խախտվեց։ Նեղ ցում առաջնորդը հայ հոգևորականութի հետ կատարեց մաղթանք Կովկասի խարքայ կոմս Ի. Ի. Վօրօնցով-Դաշկ առողջութեան համար։

Մաղթանքից յետոյ սրբազանը դիմե կեղեցին լցրած երկսեռ բազմութեանը ճառով, որի մէջ հաղորդեց Էջմիա Ամենայն Հայոց Կաթողիկոսի և միաբան թեան ողջոյնը Թիֆլիսի հայութեան։ նուհետև սրբազանը շեշտեց Թիֆլիսի առաջնորդական ծանր ու պատասխան պաշտօնի խորին գիտակցութիւնը, մի տօն՝ որ վարել են Ներսէս կաթողիկոսի վազեանի և Արիստակէսի նման երջան շատակ հոգևոր հայրերը։ Սակայն սրբազ մեծ յոյս ունի, որ հայ հասարակութի իւրաքանչիւր անդամը բարոյական պա տականութիւն կը համարէ աջակից իրան՝ ընդհանուր գործի աջողութեան մար։ Յորդորեց նաև սիրել ամեն մի սրտին շատ մօտ հինաւուրց նուիրակա Մայր Աթոռը։ Իր վերջին խօսքերը սրբ զանը նուիրեց փոխարքայի հիւանդութեան Սրբազանը առաջարկեց ներկայ եղողներ ջերմ աղօթքներ վերառաքել Ամենաբար բարձրին՝ ազգաբնակութեան սիրած կառ թանգագին առողջութեան համար։

Անցնելով բակում հաւաքված հասա կութեան միջով ու «Հրաշափառ տուած» շարականի երգասացութեամբ առաջնորդը բարձրացաւ առաջնորդար անդունդներով, որտեղից պահպանիչ աստղ ու օրհնեց ժողովրդին:

Առաջնորդարանում սպասում էին երկաթուղային կայարանում ընդունող պատգամաւորութիւնները, որոնց կողմից Տ. Յովհանկնեան մի քանի խօսքով հաւատ յայտնեց, թէ սրբազանը իր գիտական պատրաստութեամբ ու անցեալ համեստ գործունէութեամբ իր նոր պաշտօնավարութեան շրջանում կը գործէ ժողովրդի համար, ժողովրդի հետ և ժողովրդի միջոցով:

Յայտնելով խորին շնորհակալութիւն ցոյց տրված յարգանքի համար, սրբազանը մատնանշեց, որ նա ուրախ է հայ կեանքում վերջերս նկատվող մի բարի երեւոյթից. այդ այն է, որ մենք աշխատում ենք աւելի մօտենալ, հասկանալ միմեանց: Եւ սրբազանը ցանկանում է, որպէսզի հայ ազգային կրթական, հասարակական հիմնարկութիւնների գործիչները չոգեւորվեն սոսկ առանձին դէպքերում, այլ որպէսզի խօսքից գործի դիմվի:

Աւելացնենք նաև, որ սրբազանին ընդառաջ էր գնացել մինչև Սանդար կայարանը մի պատգամաւորութիւն՝ հինգ հոգուց բաղկացած՝ Թիֆլիսի հայ ծխական դպրոցների հոգաբարձութիւնների և երեցփոխների կողմից: Ն.

—

Մի քիչ յետոյ Մեսրոպ եպիսկոպոսը գնաց պալատ՝ այցելելու հիւանդ փոխարքային: Չը նայելով իր հիւանդութեան՝ փոխարքան ընդունեց Թիֆլիսի հայոց նոր առաջնորդին և խօսակցեց հետը: Եպիսկոպոսը բարեմաղթութիւններ արեց նրա շուտափոյթ առողջութեան համար: Ապա Մեսրոպ եպիսկոպոս իր յարգանքը մատուցեց կոմսուհուն:

—

Երէկ, երկուշաբթի, Մեսրոպ եպիսկոպոս պաշտօնական այցելութիւններ կատարեց: Նա այցելեց փոխարքայի օգնական գեներալ Շատիլովին, Վրաստանի էկզարխ Ինոկէնտի արքեպիսկոպոսին, փոխարքայի դիւանատան կառավարիչ Պետերսօնին, խորհրդի անդամներ Հակկէլին, Օսէցկին և այլ պաշտօնատար անձանց: Երեկոյեան նորից այցելեց պալատը և տեղեկացաւ փոխարքայի առողջութեան մասին:

—

«Մշակի» խմբագիրներ՝ Ալ. Քալանթար, Հ. Առաքելեան և «Աղբիւր»-«Տարազ» հանդէսների խմբագիր Տ. Նազարեան երէկ ցերեկով այցելութիւն տուին առաջնորդարանում Մեսրոպ եպիսկոպոսին և շնորհաւորեցին նրա առաջնորդական պաշտօնը և ունեցան զրոյց ընթացիկ խնդիրների մասին:

## ՅՈԲԵԼԵԱՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԸ

—

Շաբաթ, մարտի 1-ին, երեկոյեան ժամը 8-ին, Մանթաշեան Առեւտրական դպրոցի մեծ դահլիճում կայացաւ հայ գրերի գիւտի 1500-ամեակի և հայ տպագրութեան 400-ամեակի յոբելեանի առթիւ կազմված Թիֆլիսի յոբելեանական յանձնաժողովի նիստը, որին ներկայ էին յանձնաժողովի անդամները և բազմաթիւ կողմնակի անձինք:

Բանալով նիստը, Հ. Առաքելեան յայտարարեց, որ յանձնաժողովի նիստից առաջ նա կանէ մի զեկուցում Րօմանօվների Արքայական Տան և հայերի յարաբերութիւնների, ինչպէս և հայոց հարցի մասին, որ անխզելիօրէն կապված է առաջնի հետ:

Զեկուցման գլխաւոր միտքն էր բացատրել, թէ դեռ 300 տարի առաջ հայ ժողովուրդը իր ազատութեան յոյսերը ամփոփել է Ռուսաստանի և Րօմանովեան Արքայական Տան Ցարերի վրա: Նկարագրելով Պարսկաստանի և գլխաւորապէս Նոր-Ջուղայի հայերի առեւտրական յարաբերութիւնները Ռուսաստանի հետ, սկսեալ Ալեքսէյ Միխայլովիչ Ցարի օրից, ապա Իսրայէլ Օրիի, Գանձասարի կաթողիկոսների և Ղարաբաղի հայ մելիքների, իշխանների ձըգտումները՝ վերականգնել հայկական անկախ իշխանութիւն ռուսական հզօր հովանու ներքոյ, Մեծն Պետրոս կայսրի, Եկատերինա II կայսրուհու քաղաքականութիւնը, հայերին շնորհած արտօնութիւնները և առանձնաշնորհումները, Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանի, Ներսէս Աշտարակեցու գործունէութիւնը, դասախօսը անցաւ բուն հայկական հարցին, որի բուն ստեղծողը և հեղինակը, ասաց նա, եղաւ Ալէքսանդր II Ազատարար կայսրը՝ Սան-Ստեֆանօյի դաշնագրի 16-րդ յօդուածով: Ապա նա նկարագրեց հայկական հարցի կրած զանազան պերիպետիաները, Սասունի ջարդը, 1895 թ. մայիսեան ծրագիրը, հայկական մեծ կոտորածները, իշխան Լօբանովի ձախորդ քաղաքականութիւնը, իրանց հայերի գործած քաղաքական մեծ սխալները: Անցնելով հայկական հարցի վերջին փազիսին, դասախօսը բացատրեց ունկնդիրներին վերջերս ամեն տեղ առաջ եկած շարժումը ու հարցի այժմեան դրութիւնը և վերջացրեց հաւատ ու յոյս յայտնելով, որ Ռուսաստանը կը վերադառնայ իր աւանդական քաղաքականութեան և իր ձեռքը կանէ Թիւրքահայ ժողովրդի ազատագրութեան գործը:

Դասախօսութիւնից յետոյ կայացաւ յանձնաժողովի նիստը: Համաձայն նախագահող Հ. Առաքելեանի առաջարկին, ժողովը ընտրեց իր միջից 10 հոգուց բաղկացած մի մասնաժողով, որին պաշտօն տուեց երկուշաբթվայ ընթացքում մշակել գործունէութեան մի ծրագիր և ներկայացնել ընդհանուր ժողովին ի քննութիւն և հաստատութիւն:

## ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

—

Անցեալ փետրվարի 14-ին և 21-ին տեղի ունեցան Հայոց Ազգագրական Ընկերութեան Թանգարանի Գողթան բաժանմունքի մասնաժողովի նիստերը բժ. Ս. Զարգարեանի նախագահութեամբ: Առաջին նիստին մասնաժողովը ոտի կանգնելով յարգեց իր անդամ հանգուցեալ Աւետիք Արասխանեանի յիշատակը և նրա փոխարէն ընտրեց Ա. Դաւթեանին: Ապա ցանկանալով որեւէ կերպ յաւերժացնել հասարակական գործիչ և խմբագիր Ա. Արասխանեանի յիշատակը, մասնաժողովը որոշեց խնդրել հանգուցեալի կտակակատար պ. պ. Մենտոր Բունիաթեանին և Աւետիս Զարգարեանին՝ յանձնել Ազգագրական Ընկերութեան Գողթան բաժանմունքին Ա. Արասխանեանի գրադարանը և մի քանի յուշիկներ նրա իրերից, ինչպէս և լուսանկարը: Աւետիս Զարգարեան, որ մասնաժողովի անդամ-գանձապահը լինելով ներկայ էր նիստին, սիրալիր յօժարութիւն յայտնեց և խոստացաւ խորհրդակցել Մենտոր Բունիաթեանի հետ: Յաջորդ ժողովին Մ. Բունիաթեան ևս յայտնեց մասնաժողովին, որ ի նկատի առնելով այն հանգամանքը, որ Հայոց Ազգագրական Ընկերութեան գրադարանը Կովկասի հայութեան մտաւոր կենտրոնում հայկական կուլտուրայի նոյակապ յուշարձանն է դառնում և որ իր արդի կազմակերպութեամբ մի-մի միայուն կոթող է կանգնում մտքի հայ մշակներին նրանց մտաւոր բիւրեղներով, ամփոփելով իւրաքանչիւր գրողի երկերն ու գրքերը առանձին պահարանի մէջ, որի վրա դրված է նրա լուսանկարը, ինքը ևս սիրով համաձայնում է յանձնել Ազգագրական Ընկերութեանը Ա. Արասխանեանի գրադարանը՝ նուիրման վերջին խօսքը վերապահելով նրա փոքրահասակ աղջկան՝ նրա չափահաս դառած միջոցին: Մասնաժողովը խորին շնորհակալութիւն յայտնելով կտակակատարներին՝ որոշեց այդ գրքերը պահել այն գեղեցիկ պահարանում, որի դարակները շինված են հանգուցեալի դագաղը Ախալքալաքից Թիֆլիս տեղափոխելիս դրված արկղի տախտակներից: Գրքերն արդէն ստացված են և առանձին ցուցակագրվում են:

Բացի սրանից՝ Մկրտիչ Քալանթարեանի առաջարկով մասնաժողովը խնդրեց իր նախագահ բժ. Զարգարեանին, որ իր հետ առնելով մասնաժողովի անդամներից ում և կամենայ, այցելի Թիֆլիսում ապրող զօկերի տները և խնդրէ նուիրել Հայոց Ազգագրական Ընկերութեան Թանգարանի Գողթան բաժանմունքին իրանց ունեցած ազգագրական և հնագիտական իրերը:

Ե. Լ.

## ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ ՀԱԼԱԲԱՐՈՒՄ

—

Կիրակի, մարտի 3-ին, Հալաբարի ակումբում տեղի ունեցաւ ժողովրդական համալսարանի հայկական սեկցիայի հայերէն դասախօսութիւնը: Դասախօսութեան նիւթն էր կեանքի պայմանների անասելի թանգութիւնը, որ տարէ-տարի աւելի և աւելի սուր կերպարանք է ստանում թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում:

Դասախօս Ա. Մանուկեանը զուտ բանւորներից և աշխատաւորներից բաղկացած ունկնդիր հասարակութեանը թւական տեղեկութիւնների միջոցով ծանօթացնելով կեանքի թանգութեան, այլ և այդ թանգութիւնը առաջ բերող ուղղակի և անուղղակի պատճառների հետ, վերջում կանգ առաւ և այն միջոցների վրա, որոնցով կարելի է որոշ չափով գոնէ կասել թանգութիւն առաջ բերող պատճառների դէմ:

Դասախօսը ի միջի այլոց շեշտեց, որ քաղաքային ինքնավարութիւնը, եթէ իսկապէս կամենում է թանգութեան դէմ կռւել, պէտք է սակագներ նշանակելուց բացի ունենայ և իր սեփական մթերավաճառանոցները, մանաւանդ ամենալաւ միջոցը պէտք է համարել ժողովրդական համայնական հիմնարկութիւններ ստեղծելը՝ կազմակերպելով կօօպերացիական-սպառողական միութիւններ:

Առիթից օգտվելով կարեւոր եմ համարում ուրախութեամբ յիշելու, որ այս ամսվայ ընթացքում Հալաբարում կը բացվի այնտեղի սպառողական ընկերութեան խանութը, որը հիմնվելով Հալաբարի նման կարիք զգացող թաղամասում՝ միանգամայն կը ծառայի իր նպատակին:

Ցանկանում ենք կատարեալ աջողութիւն:

Բ. Մկրտումեան

## ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

### Շուշի-Եւլախ երկաթուղին

Շուշի, 1 մարտի

Այսօր Բագուից Միրզա Սարուխանեանի ամենամօտ անձնաւորութիւններից մէկից նամակ ստացվեց Շուշում, որ Միրզա Սարուխանեանը հեռագրել է Պետերբուրգից, թէ երկաթուղու շինութեան գործը վերջնականապէս հաստատված է և ցանկացողներին կապալով է տրվում քարային և հողային գործերը, և ինչպէս հաստատվում է, երկաթուղու շինութիւնն էլ ապրիլ ամսվանից սկսվում է: Շուշի-Եւլախ երկաթուղու համար շուտով կը յայտարարվի ռուսաց և հայոց լրագիրներում:

Լեւոն Յովսէփեան

—

### Անգիտութիւն

Ղուբա, 31 փետրվարի

Բուդուղ գիւղում գիւղացոց տաւարների մէջ անցեալներում հիւանդութիւն է ծագում: Անասնաբոյժը գալիս և պահանջում է նրանցից հիւանդ կենդանիները, բայց գիւղացիք բերում են նրանց մի մասը, որոնց բժիշկը իսկոյն մորթել և խոր հողի մէջ թաղել է տալիս: Գիւղացիները տեսնելով բժշկի արարքը և կարծելով որ փոխարէնը, այսինքն մորթված անասունների գները չեն ստանայ, թաքցնում են հիւանդ անասունների միւս մասը:

Սակայն երկար ժամանակ չէ անցնում, այդ գիւղացիները պահանջում են և գանձարանը մորթված տաւարի արժէքները վճարում է: Գիւղացիները յայտնում են բժշկին, որ դարձեալ հիւանդ եզջիւրաւորներ ունեն, և ասում են, որ այդ անասուններին ժամանակին չեն ցոյց տուել, այլ թաքցրել են: Բժիշկը իսկոյն արձանագրութիւն է կազմում գիւղացիների անտակտ և խաբեբայ վարմունքի մասին և ուղարկում հաշտարար դատաւորին:

Նորերումս Ղուբայի նոր նշանակված հաշտարար դատաւոր Տուչաբաևին 2 օրվայ ընթացքում 162 բուդուղցիների վերոյիշեալ յանցանքի գործը քննելով՝ ամեն մի գիւղացու երկու-երկու շաբաթ ոստիկանական բանտարկութեան ենթարկեց:

Մ. Ս.

## ՅՈԲԵԼԵԱՆԱԿԱՆ ՕՐԵՐԸ ԳԱՒԱՌՈՒՄ

—

Ներքին-Ախտա, 22 փետրվարի

Ամսիս 20-ին տեղիս եկեղեցում հանդիսաւոր կերպով կատարվեց հոգեհանգիստ ի յիշատակ Րօմանօվների Թագաւորող Տոհմի բոլոր հանգուցեալ թագաւորների և կայսրների:

Գիւղիս ծխատէր Ռաֆայէլ քահանան խօսեց Րօմանօվների Տան հանգուցեալ գահակալների արած բարիքների մասին դէպի հայ ազգը:

Եկեղեցին լի էր աղօթողներով. ներկայ էր աստիճանաւորների ամբողջ կազմը:

Հ. Ռաֆայէլի ճառը լաւ տպաւորութիւն թողեց թէ աստիճանաւորների և թէ ժողովրդի վրա:

Այսօր հոգեհանգիստ կատարվեց նաև տեղիս բանտում:

Իսկ երէկ, պատարագից յետոյ՝ ժամը 12-ին կատարվեց հանդիսաւոր գոհաբանական մաղթանք Թագաւոր Կայսրի, Թագուհի-Կայսրուհու, Թագաժառանգի և ամբողջ Թագաւորական Տան արեւշատութեան համար: Եկեղեցին լի էր աղօթողներով: Ներկայ էին նաև տեղիս պաշտօնական անձինք:

Ա. Ս.

—

Րօմանօվների Տան Թագաւորութեան 300-ամեակի տօնակատարման մասին թղթակցութիւններ ստացել ենք և 1) Նիժից, 2) Սեւ-քարից (Ղազ. գ.), 3) Մեղրիից, 4) Շամախուց, 5) Վերին-Շէնից, 6) Սարիղամիշից, 7) Շուշուց, 8) Աստրախանից, 9) Ախալքալաքից, 10) Բագուից, 11) Ղազախից, 12) Բաշ գիւղից, 13) Մազրայից (Սիսիան), 14) Քարվանսարայից (Ղազախ գ.) և այլ տեղերից: Այդ բոլոր թղթակցութիւններից երեւում է, որ յիշեալ տեղերումն էլ կատարվել են հոգեհանգիստներ ու մաղթանքներ, տեղի են ունեցել ժողովրդական ու դպրոցական հանդէսներ, իսկ մի քանի տեղերի թղթակիցները յիշատակում են և բանտարկեալների արձակման մասին:

## ԳԱՒԱՌԻ ՑԱՒԵՐԻՑ

### I

Լոյս աշխարհից կտրված, հարիւրաւոր վերստերով կենտրոնական քաղաքներից հեռու, ապրում է գաւառը իր դժբաղդ, աղքատութեան գիրկը ընկղմված դրութեամբ: Ոչ մի մխիթարական բան՝ որով մարդ ըսփոփվել կարողանայ, ոչ մի ուրախալի ձեռնարկութիւն՝ որ մարդուս ուրախութիւն պատճառէ:

Աղքատ անունը իր ճակատին կրելով, գիւղը երբեք չէ հետաքրքրվում մարդուս կեանքում պահանջվող այս կամ այն ձեռնարկութիւնով և իր ամեն մի պակասը աշխատում է ծածկել, աքօղել՝ իր չքաւորութիւնն առարկելով:

Գիւղը կարդալու ոչինչ չունի. գիւղը չէ կարդում առօրեայ կեանքում գոյութիւն ունեցող այն խնդիրները, տնտեսական, քաղաքական այն հարցերը, որոնք գալիս են իր իսկ ապագան, բաղդը տնօրինելու:

Գիւղը չէ կարդում այն կռիւների մասին, որոնք հսկայական փոփոխութիւն են մտցնում կեանքի մէջ, ժողովուրդների, ազգութիւնների բաղդն ու ապագան այս կամ այն կերպ փոփոխում:

Գիւղը չունի լրագիր, չունի կարդալու թերթ. մի ցաւ, մի հին ցաւ, որի համար գրեթէ առանց բացառութեան գրել, խօսել են բոլոր հայ խմբագիրները:

Կարող եմ տասնեակ գիւղեր ցոյց տալ, որոնք լրագրի երես չեն տեսնում, չեն կարողանում գիւղական աւելորդ, շռայլ ծախսերից մի քանի րուբլի անտեսել և լրագիր ստանալ:

Այն մեծ քանակութեամբ գործ ածվող գինին, օղին, հարսանիքները, քէփերը և զանազան կեր ու խումերի համար միանգամայն աւելորդաբար մսխվող փողերը եթէ հաշւելու լինենք, կը ստանանք մի պատկառելի գումար, որով շատ բան կարելի է անել. և որքան ձեռնարկութիւնների կարիք ունեն մեր գաւառները, մեր գիւղերը:

Հայ գիւղացին հետաքրքրվող մարդ է. նա լրագրի լսող է և ինքնատիպ, ինքնայատուկ հետաքրքրութեամբ հետամուտ է իր ականջին հասնող փոփոխութիւններին: Սակայն չը մոռանամ շեշտելու, որ այդ ամենը ձրիաբար, որովհետև գաւառացին առհասարակ գրքի, թերթի, ընթերցանութեան նիւթի փող տալու սովոր չէ, ընդունակ չէ: Նա մուֆթա բան շատ է սիրում:

Ներկայումս էլ երբ ամբողջ աշխարհը ջղայնացած սրտատրոփ սպասում է բալկանեան պատերազմի վախճանին, երբ ամեն մի ստացվող հեռագիր կայծակի արագութեամբ ձեռքից ձեռք է անցնում քաղաքում, հայ գիւղը, էն հեռու քարափներին, անդունդների եզրին կպած գիւղն էլ իր որոշ հետաքրքրութիւնն ունի: Հայ գիւղացին բալկանեան ներկայ պատերազմը համարում է իր ազգակից և հարազատ Թիւրքահայ դժբաղդ եղբօր ճակատագրից անխուսափելի մի դիպուած, որով և տնօրինվելու է մասամբ թշուառ, հալածված եղբօր կեանքը, նրա ապագայ կեանքի, գոյքի ապահով դրութիւնը:

Առաջս կանգնած էր Սիսիանի Ուզ գիւղացի մի ծերունի: Մենք մի քանի ընկերներով խօսում էինք Ադրիանուպոլսի ներկայ ծանր կացութեան մասին: Գիւղացին լուռ ականջ դնելուց յետոյ, երբ մենք ընդհատեցինք խօսակցութիւնը, դարձաւ ինձ.

— Ի՞նչ խաբար կայ էդ կռւից. բա ռուսը խէ չի գնար ազատի էն քրիստոնեայ հայերին. վայ, աֆսոս,—գլուխը շարժեց գիւղացին:

— Ապէր, ինչ խաբար պիտի լինի. հայերի դրութիւնը վատ է, վատ. Թիւրքը յաղթութիւն իր օրումը չի տեսնի, իսկ յաղթվելուց իր վրէժը անզէն հայերից է առնելու:

— Ախր բիթօն սաղ գնանք ռուսի տներն ընկնենք, ասենք մեզ մի խնդիր ունենք, մեր խեղճ եղբայրներին ազատիր, թող դինջ ապրեն. բաս չէ որ ռուս մէկ էլ Անգլիա մեր ապիկանն են. գնանք խնդրենք էլի,—տաքացաւ գիւղացին:

— Է՜հ, ապէր, սրան աշխարհ կասեն, ամեն մարդ իր դարդն ունի, իր հոգսն ունի. հայ ես, վայ ես,—ասաց ընկերս:

— Հա, էդ խօսը լաւ ես ասում. տղերք, եթէ թազա կազէթ կայ, մի հատ տուէք տանեմ, տանը մի լաւ կարդացող տղայ ունեմ, ես էլ շատ կը սիրեմ էդ տեսակ կռիւների պատմութիւն լսել,—ասաց ծերունին:

— Ինչո՞ւ չէք կազէթ ստանում. ինչ մեծ բան է. եթէ մարդը 20 կ. տայ, 100 մարդը 2—3 կազէթ կարող է ստանալ և կարդալ գիւղում,—վրա բերեց ընկերս:

— Աստուած վկայ, աղքատ ենք. տղէք ջան, մի կազէթ տուէք տանեմ, սաղ գեղը ձեզ կօրհնեն. խիստ կը սիրեմ կարդալ, շատ քաղցր ականջ կը դնեմ, շատ: Էն անցեալ շաբաթները մեծ տղաս Բագուից մի կազէթ էր ղրկել, սաղ գեղը կարդանք. գրած էր ասած, թէ բարիւրութիւն փոզմիշ եղած է և կռիւ սկսած. մի կազէթ տուէք, շատ լաւ իշտահով կը լսեմ էդ տեսակ բաներին,—ոգևորութեամբ տաքացաւ ապէրը և ձեռքը մեկնեց սեղանի վրա ընկած թերթը վերցնելու:

— Ապէր, էդ հին ա, առաւօտը նոր թերթ է գալու, երբ ստանանք, քեզ երկու հատ կը տամ, որ գիւղը տանես, միամիտ կաց,—ասացի ես:

— Աստուած քեզ օրհնի, շատ լաւ, առաւօտը շուտ կը գամ. բայց հայոց հաւատը վկայ, խիստ կը սիրեմ էդ տեսակ բաներ լսել. հէնց որ գեղ տարայ էդ կազէթները, սաղ գեղը ձեզ կօրհնեն. տանը կարդացող մի տղայ ունեմ, թէ հայւոր, թէ ռուսւոր շատ լաւ կը կարդայ, շատ. առաւօտը կը գամ, անպատճառ կը գամ, մնացէք բարին,—ասաց և դուրս գնաց գիւղացին:

Ծերունի նման քանի տասնեակ մարդիկ կան գիւղերում, որոնք թերթի, լրագրի կարօտ են զգում, հետաքրքրութիւնը բաւարարել են աշխատում: Սակայն այդ բոլորը դատարկ ճշմարտութիւններ են, որոնք ծառանում են մարդուս առաջ և հարց տալիս.

— Միթէ չը կայ միջոց, հնար գիւղացուն թերթ ստանալուն, լրագիր ձեռք բերելուն ընտելացնելու համար, և ո՞րն է այդ միջոցը:

Մենք կասենք, որ կայ շատ հեշտ միջոց. և նման պակասութիւնները մենք ուղղում ենք գիւղական ուսուցչին՝ լրացնելու ներկայ պակասը ևս. հայ լրագիրը գիւղական խրճթի զարդը դարձնելու պարտականութիւնը վերապահում ենք հայ ուսուցչին: Ինչպէս գիւղական տգէտ մանկան սիրտ ու միտքն է կրթում ուսուցիչը, գիւղացուն էլ պէտք է հայ լրագրի, հայ թերթի հետ ընտելացնի իր անձնական օրինակով:

Սադանդարեան

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ Նորին Կայսերական Մեծութիւն Թագաւոր Կայսրը բարեհաճել է կոմս Վօրօնցով-Դաշկովի հեռագրով հրամայել հաղորդել կովկասեան ուսումնարանական շրջանի դպրոցական մարմիններին, ուսուցիչներին և աշակերտութեանը սրտագին շնորհակալութիւն հպատակութեան զգացմունքների ու շնորհաւորանքների համար:

◆ Կադետները հարցապնդում են ներկայացրել զինւորական և արդարադատութեան մինիստրներին, թէ մտադիր են արդեօք վերաքննել տալ «Նօվօրօսիյսկի հանրապետութեան» և «Դաշնակցութեան» կուսակցութեան գործերը, ի նկատի ունենալով Լըժինի հիւանդութիւնը:

◆ Թիֆլիսի դատաստանական պալատի նախագահ Լազօգան, ինչպէս հեռագրում են Պետերբուրգից, նշանակվել է ներկայ լինելու սենատում: Նրա տեղ նշանակված է միևնոյն պալատի դատախազ Սիլինը:

◆ Ուրբաթ, մարտի 1-ին Թիֆլիսի զինւորա-նահանգական դատարանը երկօրեայ քննութիւնից յետոյ մեղաւոր ճանաչեց ուսանող «Կամօ» Տէր-Պետրոսեանին սօցիալ-դեմօկրատական կուսակցութեանը պատկանելու և 1907 թ. Երևանեան հրապարակի վրա պետական բանկի դրամատարի վրա զինված յարձակում կազմակերպելու մէջ, որի ժամանակ յափշտակվեց 250 հազար րուբլի, և դատապարտեց Բարձրագոյն հրովարտակի ուժով բոլոր իրաւունքներից զրկման և 20 տարով տաժանակիր աշխատանքների:

◆ Սաբուրթալօյի բնակիչները ամեն կերպ աշխատում են գրաւել պօլիտեխնիկումի գլխաւոր կոմիտէտին, որպէսզի ապագայ այդ բարձր կրթական հաստատութիւնը կառուցվի ոչ թէ Նաւթլուղում, ինչպէս որոշված է արդէն, այլ Սաբուրթալօյում: Վերջինի հողատէրերը համաձայնութիւն են յայտնել, բացի Գարսէֆների հողաբաժնից, մի քանի 100 դեսեատին հողաբաժին իրանց կողմից յատկացնել պօլիտեխնիկումի համար: Խնդիրը յիրաւի դառնում է չափազանց լուրջ և պատասխանատու պօլիտեխնիկումը կառուցանող մարմնի համար:

◆ Զատկի երրորդ օրը Հալաբարի հասարակական ակումբի ամառային շինութեան մէջ, Միքայէլեան փողոցի վրա, կը բացվի թռչնապահութեան ցուցահանդէս:

◆ Քաղաքային սպանդանոցի կառուցման գործում կաշառակերութեան մէջ մեղադրված ձայնաւոր Սուլաքերիձէի գործը բորբոքեց վրացի ազգայնամոլների շովինիստական կրքերը, որոնք սանձարձակ արշաւանքի են դիմել՝ բացի զուտ վրացական թերթերից, նաև վրացիներին պատկանող «Зак.» և «Зак. Рѣчь» թերթերում Թիֆլիսի քաղաքային ինքնավարութեան դէմ և մասնաւորապէս քաղաքագլուխ Ալ. Խատիսեանի հասցէին: Որ հասարակութեան մէջ վաղուց ի վեր որոշ տեսակէտ գոյութիւն ունի քաղաքային ինքնավարութեան առհասարակ աննորմալ գործունէութեան մասին, դա իրողութիւն է: Սակայն աներդարացի է միանգամայն յախուռն մեղադրանքներ բարդել Խատիսեանի նման հասարակական գործչի վրա, որի ազնւութիւնն ու շիտակ բնաւորութիւնը կասկածից դուրս է:

◆ Նոր տեսակի հեռախօսները Թիֆլիսում արդէն գործում են ամենուրեք: Հին գործիքներից լաւագոյնները ուղարկվեցին Երևան և Բաթում:

◆ Երկրագործութեան գլխաւոր կառավարչի կովկասեան լիազօր Շաշկովսկին ծառայութեան գործերով մեկնեց Եկատերինօդար:

◆ Մոսկվայից հեռագիր կայ, որ մոսկվացի հարուստ Գեորգովին խանդոտութեան հողի վրա սպանող բժ. Խանդամիրեանի գործը քննվելու է մարտի 27-ին:

◆ Հայուհեաց Որբախնամ Ընկ. վարչութիւնը խնդրում է տպել, որ ինքը շնորհակալութեամբ ստացաւ յօգուտ որբանոցի՝ «ծանդիլի» փոխարէն Եղիսաբէթ Թումիկեանից ի յիշատակ իր հանգուցեալների 5 րուբ., իսկ Եղիսաբէթ Բէհբութեանից ի յիշատակ իր ամուսնու 10 րուբլի:

◆ Կարճևան գիւղի ծխ.-դպրոցի հոգաբարձութիւնը խնդրում է մեզ տպել, որ իր խնամքին յանձնված ուսումնարանը այս տարի շնորհակալութեամբ ստանում է մի-մի օրինակ «Մշակ» և «Հասկեր», որ նուիրել է բագուաբնակ պ. Յով. Վահանեան: Նոյնպէս Թագա գիւղի, Կերչի և Թեմիր-Խան-Շուրայի ծխ. դպրոցների հոգաբարձութիւնները խնդրում են մեզ յայտնել, որ իրանք շնորհակալութեամբ ստանում են ներկայ տարվայ ընթացքում «Մշակ» մի-մի օրինակ, որ նուիրել են աստրախանցի մի խումբ «Մշակի» համակրողներ:

## ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂ ԱՐ.

## ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

—

*Մեծ-Պասւայ ներկայացումները*

Երէկվանից սկսվեցին Մեծ-Պասւայ ներկայացումները Թիֆլիսում և Բագւում: Թիֆլիսում հիւր է դերասանուհի Գասխալօվան, որը այնքան յայտնի է Թիֆլիսին իր նախկին ներկայացումներով, իր գեղեցիկ, զգայուն դերակատարութեամբ դրամատիկական և ողբերգական դերերում։

Բագւում հայկական ներկայացումները սկսվեցին Շանթի «Հին Աստուածներ» պիէսով, որը առաջ խաղացվել է Բագւում ուրիշ դերասանական կազմով։ Այժմ այնտեղ խաղում է Աբէլեան-Արմէնեան խումբը։ Այսօր նշանակված է Շիրվանզադէի «Չար ոգի» պիէսի ներկայացումը, իսկ վաղը, չորեքշաբթի, մարտի 6-ին, «Դաւաճանութիւն» դրաման դերասանուհի Իզաբէլլա Քալանթարի մասնակցութեամբ։

Մարտի 7-ին, Թիֆլիսի Արտիստական Ընկերութեան դահլիճում տեղի կունենայ երգիչ Շահ-Մուրադեանի կոնցերտը, որը խոստանում է լինել հետաքրքրական։

Նոյն մարտի 7-ին, Թիֆլիսի Արքունական Թատրոնում Բագուից եկած դերասանական խումբը կը խաղայ «Ցօ երթաս» յայտնի պիէսը։

Մարտի 10-ին, Թիֆլիսի երաժշտական դպրոցի դահլիճում ջութակահար Վրոյր կը տայ իր կոնցերտը։

Ենթադրութիւն կայ, որ դերասանուհի Իզաբէլլա Քալանթար նաև կը խաղայ մի անգամ Թիֆլիսում Մեծ-Պասի հինգերորդ կամ վեցերորդ շաբաթում, հանդէս գալով իր ռեպերտուարի մի կամ երկու պիէսում։

Այդ ռեպերտուարի մէջ մտնում են բացի Բագւում խաղացվելիք «Դաւաճանութիւն», «Նորա» և «Տրիլբի» պիէսներից՝ Շնիցլէրի «Զուարճալիք», Դիւմայի «Կիսաշխարհ», Դ'Անունցիօյի «Աշնանային արևմտի երազը», Իբսէնի «Հէդդա-Գաբլէր», Գիւի-դը-Մօպասանի «Բել-Ամի», Սումբատովի «Շղթաներ», Անդրէևի «Մեր կեանքի օրերը», Պոտապենկոյի «Դիւթական աշխարհ», նոյնպէս և «Պոլշա», «Գրականութիւն», «Յովհաննեան գիշերվայ կրակներ», «Երեկոյեան չափօր» և այլն։

—

Այսօր, Բարատովի և Բէլեայէվի դրամատիկական խմբի դերասանուհի Կարէլինա-Րաինէ առաջին դէբիւտի համար կը ներկայացվի իշխ. Վ. Բարեատինսկիի «Карьера Наблоцкаго» կոմէդիան։

Նաբլոցկիի դերում հանդէս կը գայ Թիֆլիսի թատերասէր հասարակութեան կողմից սիրված Պ. Գ. Բարատովը։

Մասնակցում են նոյնպէս՝ Բարիսով, Կոլօբով, Սավելիէվ, Միլօսլավսկի, Եանովա, Մեներկովա, Լուսցին, Վիգարով և ուրիշներ։

Վաղը դերասանուհի Պասխալովա կը խաղայ «Սօֆիա Ֆինգերհուտ», իսկ միւս օր «Միրրա Էֆրոս» բաւական յայտնի պիէսի մէջ։

—

Հայ դերասանական խումբը, որ Բագուից եկել է այստեղ, մտադիր է նոյնպէս խաղալ «Հին-Աստուածները»։

### ԳԱՒԱՌԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Նոր-Բայազէտ, 22 փետրվարի

Փետրվարի 16-ին, դպրոցի դահլիճում կայացաւ կոնցերտ երգեցողութեան ուսուցիչ Դ. Ղազարեանի ղեկավարութեամբ։

Ծրագիրը բաղկացած էր 4 մասից, ճոխ ռեպերտուարով։ Երկու բաժնում երգեցիկ երկսեռ խումբը, աւելի քան 80 հոգի, երգեց զանազան ժողովրդ., ազգային և օտար երգեր մօտ 20 հատ, որոնցից աչքի ընկան «Բաւ է եղբայր», «Համբարձում եայլա», «Լորիկ եարս տարել են», «Հայրեան», «Հիւսէյին-Ալի», «Հոռոմ, հոռոմ», «Вотъ суматоха» և այլն։ Երգեցիկ խմբին (աշ. աշակերտուհիներ) մասնակցում էին նաև Վ. Աֆրիկեան և Հ. Սաղաթէլեան, որոնք սոլօ երգեցին, առաջինը՝ «Սիրուն գարուն», իսկ երկրորդը՝ «Մանուշակ» և «Հոգեմաշ Թախիծ»։

Երաժշտ. խումբը, որ բաղկացած էր 40 հոգուց, թառի, ջութակի, մանդոլինի, զուռնի և այլ գործիքների վրա նուագեց ասիական և եւրոպական այլևայլ եղանակներ, որոնցից տպաւորիչ էին «Մեր հայրենիքը», «Սուրբօտա», «Բօլգարական քայլերգը», «На сопкахъ Манджуріи» (վալս) և այլն։ Բացի դրանցից, լաւ էր «Զարգեանը» (հէյրաթի), որը ամեն թառի վրա խմբապետ Դ. Ղազարեան, որին դաւալի վրա ձայնակցեց ուսուցիչ Ց. Ցակոբեան։ Ամբողջ երաժշտական խումբը՝ տղայ թէ աղջիկ՝ հագել էր քիւրդական շորեր. այդ նորութիւնը տպաւորութիւն թողեց հանդիսականների վրա։

Թատրոնական դահլիճը լի էր հանդիսականներով, որոնց մուտքը որոշված էր 75 կ., ուստի հետևեալ օրը, ամսիս 17-ին, նոյն կոնցերտը կրկնվեց էժանացրած գներով յօգուտ Դ. Ղազարեանի, որը նուէրներ ստացաւ հասարակութեան մի մասից, երգեցիկ խմբից և աշ. աշակերտուհիներից։ Հասարակութեան նուէրը (արծաթեայ մատուցարան և շաքարաման) մատուցեց Ղազարեանին Հայկ-Արամ Տէր-Միքայէլեան, իսկ խմբի և աշակերտութեան նուէրը (դարձեալ շաքարաման և գդալներ) ներկայացրեց օր. Հայկանդուխտ Տէր-Միքայէլեանց։

Հասարակութիւնը շատ գոհ մնաց այդ աջող համերգից, որ առաջին անգամն էր գրեթէ տեղի ունենում այդպիսի հարուստ բովանդակութեամբ և արտաքին շքեղութեամբ։

Կոնցերտից յետոյ սկսեցին պարեր, որոնք սակայն երկար չը տևեցին գիշերվայ ուշ լինելու պատճառով։ Միւս օրը նկարվեցին՝ թէ երգեցիկ խումբը և թէ երաժշտական առանձին-առանձին։ Վերջինս քիւրդական շորերով՝ երաժշտական գործիքները ձեռքներին բռնած, իսկ առաջինը՝ իրանց սովորական հագուստով։ Գ. Սինանեան

### «ՀԻՆ ԱՍՏՈՒԱԾՆԵՐԸ» ԲԱԳՒՈՒՄ

I

Բագու, 1 մարտի

Այս վերջին շաբաթներս Բագուն անճանաչելի է դարձել։

Սովորաբար միշտ լուռ, անդորր ու ճահճացած հայ հասարակական կեանքը, որին շատ քիչ է աջողվում շարժել իր տեղից, այժմ ապրում է տենդային թափով, եռուն կեանքով։

Եւ այդ բոլորը շնորհիւ Շանթի «Հին Աստուածների»։

Խանութներում ու տներում, թատրոններում ու ճաշարաններում, ժողովներում ու փողոցներում, ամեն տեղ միակ խօսակցութեան առարկան «Հին Աստուածներն» են։

Մոռացված է ամեն ինչ, բորսա ու պատերազմ, կեանքի պէս-պէս երևոյթները, և ամեն տեղ, ամենուրեք միայն «Հին Աստուածների» ոգին է սաւառնում։

Եւ Շանթը իր «Հին Աստուածներով» մի ամբողջ դարաշրջան է ստեղծել։ Հէնց այն բանը, որ Բագուի սովորաբար թմրած ու մեռած կեանքը այժմ շարժվում է ուժեղ թափով, և այդ՝ շնորհիւ «Հին Աստուածների», դա բաւական է ցոյց տալու համար, թէ ի՛նչպիսի հետաքրքրութիւն է զարթեցրել մեր հասարակութեան մէջ այդ պիէսը։

Բագուի հայ թատրոնը երկար տարիներ է չէ յիշում, որ որևէ պիէս խաղացվի մի սեզոնի ընթացքում երեք անգամ, իսկ այսօր «Հին Աստուածները» արդէն հինգերորդ անգամ խաղացվեց և այն էլ միմեանց վրա. այդ մի չը տեսնված երևոյթ է Բագուի հայ թատրոնի կեանքում։

Ի՞նչ է դրա պատճառը. արդեօք իսկապէս այդ պիէսան համաշխարհային գրականութեան մի շեդեօվր է թէ պիէսի աջողութեանը մեծ չափերով նպաստում են նախնական ռեկլամները, հասարակութեան լարված դրութիւնը, պիէսի գեղեցիկ, աչք շոյող էֆֆէկտաւոր տեսարանները — այդ մասին չէ մեր խօսքը, այլ առայժմ աշխատենք ծանօթացնել ընթերցող հասարակութեանը «Հին Աստուածների» ներկայացման, դատախօսութիւնների և դատավարութեան հետ։

Վաղարշակ Թումանեան

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

### ԳԱՒԱՌԱԿԱՆ ՏՕՆԸ ՄԵՂՐՈՒՄ

Մեղրի, 25 փետրվարի

Այս տարի լրանում է Մեղրիի ծխական երկսեռ վեցամեայ դպրոցի ուսուցիչ Գէորգ Խարմանեանի 25-ամեայ ուսուցչական գործունէութիւնը։

Գ. Խարմանեանը ծնվել է 1862 թւին Մեղրի գիւղում, նախնական կրթութիւնը ստացել է Մեղրիի տեղացի ուսուցիչներից, ապա 1877 թւին մտնելով Թիֆլիսի Ներսիսեան դպրոցը՝ 1884 թւին աւարտել է և այնտեղից անցել է Պարիզ շարունակելու դիտաւորութեամբ։ Սուղ միջոցները ստիպել են նրան մնալ Պարիզում միայն մի տարի և լսել գրականութիւն. ապա թողել է իր այդքան սիրած մտադրութիւնը և վերադարձել է հայրենիք հայ վարժապետի պաշտօնով։

Չը նայելով այն իմաստուն առածին, թէ մարգարէն իր գաւառում պատիւ չունի, սակայն Գ. Խարմանեանը սկզբունք է դրել անպայման ծառայել իր բնագաւառում և նա այդ սկզբունքին հաւատարիմ է մնացել մինչև այսօր էլ, չը սարսափելով դպրոցական այն մտախլապաս և փոթորիկներից, որոնցով ծածկված է մեր հայ դպրոցի երկնակամարը, և շարունակ լուսատու ջահը ձեռքին նա ամբողջ 25 տարի չընկճվելով անցել է Մեղրիից և Մեղրիի շրջանի շատ գիւղերից, սփռելով իր շուրջը լոյս և գիտութիւն։

Գ. Խարմանեանը իր խաղաղ բնաւորութեամբ ամեն տեղ աշխատել է նոր դպրոցների բացման և դպրոցական շէնքերի կառուցման գործերում։

Ութսունական թւականներին նա թղթակցել է հայ լրագիրներին, տալով օգտաւէտ տեղեկութիւններ գաւառից, բայց վերջը զանազան հանգամանքներ ստիպել են նրան թողնել թղթակցութիւնը և սրտի ամենամեծ թափով նուիրվել դպրոցական գործին, կրթել մատաղ սերունդ և տալ Մեղրիին գրագէտ մայրեր։ Մեղրիի այսօրվայ յայտնի գործիչները, գրագէտ հայրերն ու մայրերը եղել են Գ. Խարմանեանի նախկին աշակերտները։ Նա կեանքի մեծագոյն մասը անց է կացրել դպրոցում և այժմ հասել է պատկառելի տարիքի. նա իր բազմամարդ ընտանիքի միակ կերակրող ձեռքն է։

Ի նկատի ունենալով Գ. Խարմանեանի մեծ ու գնահատելի գործունէութիւնը, տեղիս դպրոցի հոգաբարձութիւնը, ուսուցչութիւնը և մի շարք այլ ընկեր ուսուցիչներ ու համակրողներ որոշել են տօնել գաւառական պատկառելի հայ ուսուցչի 25-ամեայ յօբելեանը, որի համար ընտրվել է յօբելեանական յանձնաժողով։ Արդ՝ յօբելեանական յանձնաժողովը դիմում է մեղրեցի ինտելիգենցիային, որն ապրում է Ռուսաստանի զանազան վայրերում, ընկեր ուսուցիչներին, որոնց սրտին մօտ է դպրոցը և գաւառական ուսուցիչը, որպէսզի իրանց շնորհաւորական հեռագրերով, ուղերձներով և դրամական նուէրներով աջակցեն յանձնաժողովին և հնարաւորութիւն տան բարոյապէս խրախուսելու յօբելեարին և նիւթականապէս բարւոքելու իսկական հայ վարժապետի դրութիւնը։

Յօբելեանական հանդէսը տեղի է ունենալու այս տարվայ ապրիլի 20-ին տեղիս դպրոցի դահլիճում։ Շնորհաւորական հեռագրերը և ուղերձները ուղարկել հետևեալ հասցէով. Ордубатъ — Мегри, учителю Никогосяну, դրամական նուէրները Ордубатъ — Мегри, Б. Тошьяну.

Խնդրվում է հեռագիրները, ուղերձներն ու դրամական նուէրները ուղարկել ոչ ուշ քան ապրիլի 10-ը, որպէս զի հնարաւոր լինի ստանալու Օրդուբաթի պօստատնից։

Յօբելեանական յանձնաժողովի նախագահ՝ Յովակիմ Մալումեան. անդամներ՝ Մեժլումեան Ղ., Մեղեան Խ., Տիրացուեան Ն., Տօշեան Բ., Վաչեան Ս., Վաչեան Դ. և Ոսկեան Կ.։ Անդամ-քարտուղար՝ Յովհ. Նիկողոսեան։

## ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Իզզէթ-փաշան տեղեկացնում է Բ. Դրան, որ Ջաթալջայի թիւրք զօրքերը զգում են զէնքի ու ռազմամթերքի պակասութիւն։

◆ Բ. Դուռը, ի նկատի ունենալով Սկիւտարի և Ադրիանուպօլսի կրիտիքական դրութիւնը, պատուիրագրեց երկուսի բերդապետներին բանակցել պաշարող զօրքերի հրամանատարների հետ բերդերը պատուաւոր պայմաններով յանձնելու մասին։

◆ Դարդանէլում թիւրքերը բռնեցին մի ֆրանսիական շոգենաւ, որ ռազմամթերք էր փոխադրում բուլգարական զօրքի համար։

◆ «Մ. և Ա.» կոմիտէտը շարունակում է բանակցութիւնները գահաժառանգ Եուսուֆ-Իզզէթդինի հետ։ Սուլթանի գահընկէցութիւնը համարվում է անխուսափելի։

◆ Հնդկական բանկը Բերլինից առաջարկեց Բ. Դրանը 10 միլիոն ստերլինգի փոխառութիւն.

◆ Անհեթեթ լուրեր են պտտվում Բէլգրադում, թէ իբր Սերբիան գաղտնի դաշն է կապում Ցունաստանի հետ ընդդէմ Բուլգարիայի։

◆ Վիէննայում լուրեր են պտտվում, թէ Չեռնօգորիան, եթէ Աւստրիան չը հրաժարվի Սկիւտարն Ալբանիային յանձնելու մտքից, պատրաստ է պատերազմ յայտարարել Աւստրիայի դէմ, որպէս զի այդպիսով առաջ բերէ աւելի վճռական միջամտութիւն Ռուսաստանի կողմից։

◆ Ռուսաստանի և Աւստրիայի յարաբերութիւնները նորից սպառնում են սուր կերպարանք ստանալ Սկիւտարի հարցի պատճառով։

◆ Պետերբուրգ են գալու Դանևը և գեներալ Դմիտրիևը յատուկ յանձնարարութեամբ։

◆ Ցունաստանը վճռապէս յայտնեց, որ նա նուաճած երկրներից և ոչ մի կտոր չի զիջի։

◆ «Н. В.»-ում տպված է ռումին դիպլօմատի հետ ունեցած խօսակցութիւնը, որ ռումին-բուլգարական կոնֆերենցիան Պետերբուրգում՝ համարում է անօգուտ։ Ռումինիան, նրա ասելով, ծայրայեղ դէպքում վճռել է զօրքերով գրաւել Սիլիստրիան։

◆ Աւստրիական պաշտօնական օրգանները յայտնում են, որ Աւստրիան բնաւ պարտաւորութիւն յանձն չէ առել Ռուսաստանի առաջ զինաթափ լինելու։ Կատարեալ սպառազինված՝ Աւստրիան սպասում է ռումին-բուլգարական վէճի վախճանին։

◆ Մայիսին Ռուսաստան է այցելելու հռչակաւոր Էդիսօնը։

◆ Պետերբուրգում քիչ հաւանական լուր է պտտվում մինիստրների խորհրդի նախագահ Կոկովցեվի հրաժարականի մասին։

◆ Պետերբուրգում այս ամսում գումարվելու է խուզարկու ոստիկանութեան պետերի համաժողով։

◆ Պետերբուրգում նորից լուրեր են տարածված ժող. լուս. մինիստր Կասսօյի հրաժարականի մասին։

◆ Ռուսաց ներքին գործերի մինիստրութեան հաշւում ամբողջ Ռուսաստանում ներկայումս կան զանազան մասնագիտութեան 25,927 բժիշկ, որոնցից 23,734-ը տղամարդիկ են, իսկ 2193-ը կանայք. Ատամնաբոյժների թիւն է 2576, անասնաբոյժներինը՝ 4726.

◆ Պետերբուրգում պրոֆ. Դ. Օվսեանիկօ-Կուլիկովսկիի աղջիկը, ինքնասպանութիւն գործելու նպատակով, բացեց վառարանը այրվելու համար. նրան փրկեցին մահից։

## ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

2 մարտի

ԿԱԶԱԲԼԱՆԿԱ։ Գերմանահպատակ Հէնրիխ Ֆիկի տնից վերադարձող զինւորների վրա քարեր նետեցին։ Ամբոխը ներս խուժեց տունը և տեղացի պահապաններին ստրկանութիւն տարաւ։ Գերմանական հիւպատոսը բողոքեց ֆրանսիական հիւպատոսարանին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Բանւորական հարցի մասնաժողովի նախագահ ընտրվեց առաջադիմական Կոնօվալովը, օգնական՝ հոկտեմբրեան Րօձեանկօն, քարտուղար՝ սահմ.-ռամկ. Ստեպանօվը։

Մամուլի մասնաժողովի նախագահ ընտրվեց Շուլգինը, օգնական՝ Շուբինսկին, քարտուղար Րատկէվիչը։

Հոկտեմբրեանները և առաջադիմականները օրէնսդրական նախագիծ ներկայացրին՝ սահմանելու Դումայի և Խորհրդի ընտրեալ անդամների անպատասխանատուութիւն արտասանած ճառերի համար և փոփոխելու Պետական Դումայի կանոնադրութեան 14-րդ և 22-րդ յօդուածները։

Աշխատաւորականները հարցապնդում ներկայացրին մինիստրների խորհրդի նախագահին և զինւորական, ներքին գործերի, արդարադատութեան և առևտրի մինիստրներին Լէնայի ոսկեհանքերում մի տարի առաջ կատարված զեղծումների և յանցաւորներին չը դատելու պատճառների մասին։ Սոյնանման հարցապնդում ներկայացրել են նաև հոկտեմբրեանները ներքին գործերի մինիստրի անունով։

Դումայի մասնաժողովը եկաւ այն եզրակացութեան, որ աշխատաւոր խմբի ներկայացրած օրէնսդրական նախագիծը ամնիստիայի մասին խախտում է Հիմնական Օրէնքների 23-րդ յօդուածը, որի համաձայն դատապարտվածներին ներումը և կատարված յանցագործութիւնների ընդհանուր ներումը պատկանում է Թագաւոր Կայսրին, ուստի մասնաժողովը որոշեց, որ ամնիստիայի մասին ներկայացված նախագիծը չը պէտք է ընդունվի, ոչ էլ կարդացվի Դումայի ընդհանուր նիստում։

«Правда»-ի խմբագիրը ենթարկվեց 500 ռուբլի տուգանքի։

Կոկովցէվը յայտնեց, որ կառավարութիւնը մեծ պատրաստակամութեամբ կը կռուէ սինդիկատների դէմ, եթէ ապացոյց ունենայ, որ այդպիսիները գոյութիւն ունեն։

«Рѣчь», «Р. Молва» և «День» լրագիրների խմբագիրները ենթարկվում են պատասխանատուութեան՝ զօրքի հասցէին վիրաւորական յօդուածներ տպելու համար։

ՇԱՄԱԽԻ։ Զգացվեց ուժեղ երկրաշարժ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՒԵԼԱԳՈՅՆ Է
ՔԱՆ ՇՊԱՐԸ...

Կանանց վտանգ. թշնամին կապութիւնն է, որը ոչ միայն առողջութ. է խորտակում, այլ և գեղեցկութիւնը։ Երեսի գոյնը դեղնում է, դիմագծերը սրվում են, շնչառութիւնը կորցնում է իր թարմութիւնը, փորը ուռչում է և կարծրանում, ամբողջ տեսքը այլակերպվում։ ՍԿԱՎՈՒԼԻՆԸ բուժելով կապութիւնը՝ երեսին տալիս է աւելի լաւ տեսք, քան շպարը։

ՍԿԱՎՈՒԼԻՆԸ
լուծողական է դեղհատիկներով, առանց համի և հոտի։
(B. 16433)

ԻՆՏԵԼԻԳԵՆՏ
ՄԻ ՀԱՅՈՒՀԻ
ցանկանում է ունենալ տնտեսուհու պաշտօն։ Հմուտ է նաև կարուձևին։ Հասցէն՝
Саратовъ, до востребованія, А. М.
(օ. մ.) 151. 6—5

Գեղեցկութիւնը բարձր կատարելութեան է հասց
№4711 ՎԱՐԴԻ ԲՈՒՐԵՂԵԱՅ ՍԱՊՈՆ
երեսի կաշուն և գոյնին տալիս է այն քնքշութիւն, հարթութիւն և առաձգականութիւն, որոնք համարվում են ամենաբարձր գեղեցկութեան իսկական նշաններ։ Կտորը 25 կոպ.։ Կայ ամենուրեք։
Ֆերդ. Միւլհենս պարֆիւմերիա № 4711
Կէօլն-Րէյնի վրա։ Րիգա։ Հիմնված 1792 թ.

PARFUMERIE
№4711
F. MÜLHENS

(M. 529879/529205) 10—6

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ 11—12 ժ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) հ.:
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—1—2 ժ. ներքին և երեխայ հիւ.:
Կ. Մ. ՋԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նե գային:
Ջ. Ի. ԲԱՐԱՆՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութ կանանց և երեխայոց հ.:
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և հիւ.:
Մ Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ վիրաբուժութեան և միզասեռ. հ.:
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայ հիւ. և ծաղկահատ.:
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.:
ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.:
ԿԻՆ ԲԺԻՇԿ Մ. Լ. ՌԵՆԻԳԵՐ-ԱՐԾԵՎԱ—6—7 ժ. մանկաբարձութիւն, կանանց և երեխայոց հիւ.:
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—25

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ընկերութեանս Խմբագրական Մասնաժողովի խմբագրութեամբ և Ընկերութեանս հրատարակութեամբ ԼՈՅՍ ՏԵՍՆՈՂ
„ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ“
ներկայ 1913 թւին կը հրատարակվի ամիսը մէկ անգամ։
Մատենադարանը կը պարունակի ինքնուրոյն և թարգմանական գրուածքներ հետևեալ ծրագրով. 1) Վէպեր, վէպիկներ, պատմուածքներ և գեղարուեստական ուրիշ գրուածքներ։ 2) Թատերական գրուածքներ։ 3) Եղբերգական երկեր։ 4) Այլ այլք։ 5) Ցայտարարութիւններ։ Իւրաքանչիւր համարը բաղկացած կը լինի մօտ 96 երեսից Ընկերութեանս հրատարակութիւնների դիրքով եւ կը ներկայացնէ մի ամբողջութիւն։
Տարեկան 12 համարի բաժնեգինն է ճանապարհի ծախքով՝ Ռուսաստան 1 ր. 80 կոպ., արտասահման 5½ ֆրանկ։
◆— Առանձին բաժանորդագրութիւն չէ ընդունվում։ —◆
Բաժանորդ կարելի է գրվել՝ Թիֆլիսում Ընկերութեանս գրասենեակում, Бебутовская, 25, և բոլոր հայ գրավաճառանոցներում։ Գաւառներում՝ Ընկերութեանս ճիւղերի, աշխատակից անդամների, գործակալների և տեղական գրավաճառների մօտ։
Ծանօթ.—Լոյս տեսաւ և ուղարկվեց բոլոր բաժանորդներին «Հանրային Մատենադարանի» № 13-ը՝ Լօրդ Բայրոնի «Մանֆրէդ» գիրքը, անգլիերէնից թարգմ. Տիրայր վարդապետ։
(կ.հ.հ.ը.) 166. 5—3

ՄՕՍԿՎԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԳԵՑԻԿ ԽՄԲԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
համար հարկաւոր է ՄԻ ՍՕԼԻՍՏ ԵՐԳԻՉ (ցանկալի է լիրիքական կամ բարիտօնային տենոր)։ Գերադասութիւն է տըրվելու այնպիսիներին, որոնք վճռել են նուիրվել երգչական կամ երաժշտական գործունէութեան։ Պայմանների մասին դիմել Ե. Բաղդասարեանին. Москва, Лазаревскій Институтъ Восточныхъ Языковъ.
Գործավար խմբի՝ Ռ. Շխեանեան
(օ. մ.) 175. 3—1

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный